# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 40 (2090) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 29, 2022
VOLUME 42, NO. 40 (2090) SATURDAY OCTOBER 29, 2022

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Հայաստան Արդիական Զինատեսակներու Որոնումին Մէջ

Սեպտեմբերեան պատերազմէն ու ատրպէյճանական բանկի Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժումէն ետք, առաւել հրատապ դարձաւ հայկական բանակը արդիական զինատեսակներով օժտելու հարցը: Պատերազմէն անմիջապէս յետոյ, Ազգային Ժողովէն ներս վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, Հայաստան միլիոնաւոր տոլարներ արդէն իսկ վճարած է նոր զինատեսակներ ապահովելու համար, սակայն անոնց մատակարարումը չէ իրականացած: Յստակ էր թէ, խօսքը ուղղուած էր Ռուսաստանին, որ մինչեւ օրս կը մնայ Հայաստանի զինամթերքի գլխաւոր, չըսելու համար միակ աղբիւրը:

Այսօրուայ դրութեամբ, ցանկութեան պարագային իսկ, Ռուսաստան դժուար թէ կարողանայ բաւարարել Հայաստանի պահանջները: Ուքրանիոյ պատերազմի կանխատեսուածէն աւելի երկար տեւելուն պատճառաւ, Ռուսաստանը՝ ի՛նքը զէնքի ու զինամթերքի անբաւարարութեան առջեւ կը գտնուի ու ստիպուած կը դիմէ այլ երկիրներու, ինչպէս Իրանին եւ Հիւսիսային Քորէային, անոնցմէ զէնք գնելու համար:

Վարչապետի Խորհրդարանին մէջ ունեցած ելոյթէն ետք, հնդկական մամուլին մէջ սկսան լոյս տեսնել յօդուածներ, որոնց համաձայն Երեւան 250 միլիոն տոլարի զինատեսակներ ապահոված է Հնդկաստանէն: Իսկ վերջերս, երբ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան այցելեց Հնդկաստան ու ներկայ գտնուեցաւ ռազմական իրերու ցուցահանդէսին, այդ երկրի հրթիռներու արտադրութեամբ զբաղող մեծ ընկերութիւններէն մէկուն ղեկավարը յայտարարեց որ, Հայաստանը համազարկային հրթիռներու «Pinaka» կոչուող համակարգերու երեք տեսակ պատուիրած է, որոնք Տելհիէն Երեւան պէտք է տեղափոխուին յառաջիկայ երկու տարուան ընթացքին:

Հնդկական աղբիւրները կը խօսին նաեւ այն մասին, որ Երեւան հետաքրքրուած է հակաօդային պաշտպանութեան համակարգերով եւ հարուածային անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ):

Վերջին օրերուն Հայկական մամուլին մէջ երեւցան նաեւ հրապարակումներ, որոնց համաձայն Իրան պատրաստ է Հայաստանին վաճառել իր արտադրած ԱԹՍ-նե-

Շար.ը էջ 6

## Ռուսաստան Մտահոգիչ կը Նկատէ Կովկասի Մէջ Թափ Հաւաքող Միտումները

*«Մեզ չեն կրնար չանհանգստացնել Հարաւային Կովկասի մէջ թափ հաւաքող մտահոգիչ միտումները, ուր Արեւմուտքը կը փորձէ տեղափոխել Ուքրանիոյ վրայ փորձարկուած առճակատման մեխանիզմները», ըսած է Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան խօսնակը: Մարիա Զախարովան անդրադարձած է յատկապէս Հայաստանի շուրջ զարգացումներուն՝ պնդելով, որ հայ-ռուսական «դարաւոր կապերուն վնասելու համար տարածաշրջանին մէջ Ռուսիոյ քաղաքականութիւնը վարկաբեկող քայլեր կը ձեռնարկուին», սակայն իրենք վստահ են, որ «Երեւանն ու Մոսկուան գժտեցնելու այդ փորձերը յաջողութեամբ պիտի չպսակուին»:*

*Զախարովան ընդգծած է, որ Մոսկուան վճռական է ամրապնդելու ռազմավարական դաշնակցութիւնն ու բազմակողմ յարաբերութիւնները Հայաստանի հետ, որպէս օրինակ նշելով, որ կողմերուն միջեւ կը զարգանայ երկխօսութիւնը ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական ուղղութիւններով, առեւտրաշրջանառութիւնը կ՚աճի աննախադէպ կշռոյթներով, տամնեակ մեծ ռուսական ընկերութիւններ պատրաստ են յառաջիկային*



Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան խօսնակ Մարիա Զախարովա

*եւս ներդրումներ ընելու Հայաստանի տնտեսութեան մէջ: Զախարովան, սակայն, որեւէ բան չէ ըսած Հայաստանը յուզող ամենակարեւոր հարցին՝ Ռուսիայէն այժմ ակնկալուող ռազմական աջակցութեան մասին, փոխարէնը պնդած է, որ «անհիմն են մեղադրանքները, իբր Մոսկուան չի կատարեր Հայաստանի անվտանգութեան հար-*

Շար.ը էջ 6

## Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութիւնը Կը Դատապարտէ Ատրպէյճանի Գործողութիւնները

*Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութեան (The International Association of Genocide Scholars-IAGS) Գործադիր Մարմինը Հոկտեմբեր 24-ին ընդունած է «Հայաստանի Հանրապետութեան եւ Հարաւային Կովկասի բնիկ հայերու դէմ ատրպէյճանական յարձակման մասին» յայտարարութիւն, որ հրապարակուած է նաեւ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-հիմնարկի Ֆէյսպուքի էջով:*

*Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութեան յայտարարութեան մէջ կ՚ըսուի, որ խստօրէն կը դատապարտէ Ատրպէյճանի ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք եւ շարունակուող յարձակումը Արցախի դէմ՝ մտահոգութիւն յայտնելով, որ Արցախի ժողովուրդը կանգնած է ցեղասպանութեան վտանգի առջեւ:*

*Ցեղասպանութեան վտանգը վերացնելու նպատակով Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութեան Գործադիր Մարմինը կոչ կ՚ընէ՝*

Շար.ը էջ 4

## Հնդկական Կողմը Կը Հաստատէ՝ Հայաստանը «Pinaka»-ներու Երեք Տեսակ Պատուիրած է



Հնդկական համազարկային հրթիռներու »Pinaka« համակարգ

*Հնդկական կողմը պաշտօնապէս հաստատեց, որ Հայաստանը համազարկային կրակի «Pinaka» կոչուող համակարգերու երեք տեսակ պատուիրած է, որոնք Տելհիէն Երեւան պէտք է տեղափոխուին յառաջիկայ երկու տարուան ընթացքին: Այդ մասին յայտնած է հրթիռներու արտադրութեամբ զբաղող մեծ ընկերութեան՝ «Solar Industries»-ի ղեկավար Սաթեանարայան Նուվալը՝ Հնդկաստանի մէջ բացուած «DEFEXPO» ցուցահանդէսին ժամանակ:*

*«Մենք «Pinaka1»-ի, ընդլայնուած հեռահարութեան «Pinaka»-ի եւ կառավարուող «Pinaka»-ի արտահանման պատուէր ստացած ենք Հայաստանէն: Ըստ վերջնաժամկէտին, պէտք է այդ երեքն ալ աւարտենք երկու տարուան մէջ», ըսած է ռազմարդիւնաբերութեամբ զբաղող ընկերութեան ղեկավարը:*

*Հնդկական զէնքի մեծ այս ցուցահանդէսին ներկայ եղած է նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը, որ հանդիպած է Հնդկաստանի գործընկերոջ հետ: Հանդիպու-*

Շար.ը էջ 6

## Մենք Պէտք է Հայերուն Ռազմական Աջակցութիւն Ցուցաբերենք. Վալերի Պուայէ



Ֆրանսայի Ծերակոյտի անդամ՝ Վալերի Պուայէ

*Ֆրանսայի Ծերակոյտին մէջ Հոկտեմբեր 19-ին, Ծերակոյտի հանրապետական խմբակցութեան պատգամաւոր, Ֆրանսա-Հայաստան բարեկամական խումբի փոխնախագահ Վալերի Պուայէն դիմելով խորհրդարանին մէջ ներկայ ար-*

Շար.ը էջ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ինչու Հայաստանի Տարածքով, Ովքեր Են Միջանցքի Հիմնական Շահառուները, եւ Ինչու Միջանցք, Այլ Ոչ Թէ Ճանապարհ

44-օրեայ պատերազմից յետոյ, Նոյեմբերի 9-ի համատեղ յայտարարութեան համաձայն, տարածաշրջանում պէտք է տեղի ունենար բոլոր տնտեսական ու տրանսպորտային կապուղիների ապաշրջափակում:

Սակայն դեռեւս ամիսներ առաջ ՀՀ կառավարութեան՝ Հայաստան-Ատրպէյճան սահմանին երեք անցակէտ բացելու մասին առաջարկին Ատրպէյճանը դեռ չի արձագանքել, փոխարէնն անգամ պաշտօնական յայտարարութիւններում շեշտում են, այսպէս կոչուած, միջանցքի մասին: Եւ սա այն դէպքում, երբ Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ դրա մասին խօսք անգամ չկայ, ընդհակառակը՝ խօսւում է ճանապարհների ապաշրջափակման մասին:

Իսկ ինչո՞ւ հենց միջանցք, այլ ոչ թէ ճանապարհ: Ինչո՞ւ հենց Հայաստանի տարածքով եւ ովքե՞ր են միջանցքի հիմնական շահառուները:

ՀՀ սուվերեն տարածքով միջանցքի հիմնական շահառուներից մէկը Ատրպէյճանն է:

Միջանցքն Ատրպէյճանին թոյլ կը տայ՝

- առաւել ձեռնտու պայմաններով բեռնափոխադրումներ կատարել Ատրպէյճան-Նախիջեւան-Թուրքիա երթուղով
- վերահսկողութիւն ունենալ Իրանից ՀՀ ցամաքային տարածքով անցնող բեռների նկատմամբ
- որպէս զգալուն թեմա օգտագործել՝ ՀՀ ներքաղաքական իրավիճակը եւ հասարակական տրամադրութիւնները սրելու համար
- Ատրպէյճանը ոչ քօղարկուած նկրտումներ ունի նաեւ Սիւնիքի նկատմամբ, միջանցքը առաջին քայլն է՝ յետագայում այդ տարածքներում ատրպէյճանցիների վերադարձի համար լեգիտիմ հենք ստեղծելու համար:

ՀՀ սուվերեն տարածքով ճանապարհի դէպքում բեռնափոխադրումները վերահսկելու է ՀՀ-ն, իսկ փոխադրումների համար որպէս տարանցիկ գօտի Ատրպէյճանը ստիպուած է լինելու հարկեր վճարել Հայաստանին, ինչը Ատրպէյճանի համար ոչ մի կերպ ընդունելի չէ: Քանի որ Ատրպէյճանական կողմը տարիներ շարունակ հրաժարուել էր անգամ օգտուել Հայաստանի օդային տարածքից, եւ միայն այն պատճառով, որ ստիպուած չլինի հարկեր վճարել: Տնտեսապէս զարգացած Հայաստան Ատրպէյճանին պէտք չէ:

Ճանապարհ ու երկաթուղի Ատրպէյճանն Իրանի տարածքով էլ կարող է ստանալ, սակայն Իրանը երբեք միջանցք չի տայ Ատրպէյճանին, Հայաստանն էլ չի տայ, բայց Ատրպէյճանը փորձում է Հայաստանից ուժով ստանալ միջանցքը, ինչը շատ աւելի քիչ հաւանական է, որ Իրանի դէպքում յաջողուի:

ՀՀ տարածքով միջանցքի հիմնական շահառուներից միւսը Թուրքիան է:

Միջանցքը Թուրքիային թոյլ կը տայ՝

- Թուրքական աշխարհի հետ անխոչընդոտ կապի ապահովում
- Իրանի՝ Հայաստանի տարածքով դէպի Եւրոպա հնարաւոր գազատարի հեռանկարի ճանապարհի փակում

ՀՀ սուվերեն տարածքով ճանապարհի դէպքում ինչպէս եւ ատրպէյճանական, այնպէս էլ թուրքական բեռնափոխադրումները վերահսկելու է Հայաստանը, ստիպուած են լինելու հարկեր վճարել ՀՀ-ին, արդիւնքում Հայաստանը կ՚ունենայ էլ աւելի զարգացած տնտեսութիւն, ու կը կարեւորուի Հայաստանի դերն ու նշանակութիւնը տարածաշրջանում: Իսկ այս ամէնը ինչպէս Ատրպէյճանի, այնպէս էլ Թուրքիայի համար, մեղմ ասած, ցանկալի չէ:

ՀՀ տարածքով միջանցքի հիմնական շահառուներից է նաեւ Ռուսաստանը:

Միջանցքը Ռուսաստանին թոյլ կը տայ՝

- ազդեցութիւն ունենալ Ատրպէյճանից Նախիջեւան եւ Թուրքիա բեռնափոխադրումների նկատմամբ
- ազդեցութիւն ունենալ Իրանից ՀՀ ցամաքային տարածքով անցնող բեռների վրայ
- յաւելեալ լծակներ ունենալ ՀՀ-ի եւ Ատրպէյճանի վրայ, ինչպէս նաեւ վերահսկել արեւելք-արեւմուտք ճանապարհների ամենակարեւոր հանգոյցը:

Ուքրանիայի դէմ սկսած յատուկ օպերացիայից յետոյ՝ Ռուսաստանի դէմ Արեւմուտքի ու ԱՄՆ-ի կիրառած պատժամիջոցներից յետոյ, ՌԴ-ն փորձում է թէ արտահանման եւ թէ ներկրման համար շուկայ գտնել: Այս պարագայում Արեւմուտքի ու Ռուսաստանի հետ երկու լարի վրայ խաղացող Թուրքիան իտէալական տարբերակ է, մնում է ցամաքային կապ հաստատել Թուրքիայի հետ: Այս համատեքստում տարածաշրջանում Թուրքիայի եւ Ատրպէյճանի դերն աւելի է մեծացել, եւ հիմա Ատրպէյճանը Ռուսաստանի համար կարող է դառնալ Արեւմուտք գազի եւ նաւթի արտահանման հարթակ:

Որքան ռուսական պաշտօնական հարթակները փորձում են հերքել ՌԴ-ի մասնակցութիւնը Հայաստանի սուվերեն տարածքով միջանցք բացելու՝ Ռուսաստանի նկրտումները, փաստերն այլ բան է վկայւում: Նախ, ՌԴ ու ՀԱՊԿ անգործութիւնը Հայաստանի սուվերեն տարածք ներխուժած ատրպէյճանական զինուժին, Հայաստանին զէնքի մատակարարման պարտաւորութիւնները չկատարելը, ՀՀ-ում տեղակայուած ռուսական զօրքի իներտութիւնը, ՌԴ դաշնակից Ատրպէյճանի զօրքի ագրեսիւութիւնը ՀՀ սահմանին:

Ի դէպ, թէ Ատրպէյճանը, թէ Թուրքիան, թէ Ռուսաստանը կողմ են, որ ՀՀ տարածքով միջանցքը լինի Ռուսաստանի վերահսկողութեան ներքոյ:

ՀՀ տարածքով Ռուսաստանը միջանցք ստանալու մի քանի տարբերակ ունի:

1. Ռուսաստանի դաշնակից Ատրպէյճանը ռազմական էսկալացիայով թուլացնում է Հայաստանին այնքան, որ Հայաստանը ստիպուած լինի մտնել Միութենական պետութեան կամ ՌԴ կազմի մէջ:

2. Ռուսաստանի դաշնակից Ատրպէյճանին յաջողւում է էսկալացիայի արդիւնքում ՀՀ սուվերեն տարածքից միջանցք վերցնել դէպի Նախիջեւան, որի վերահսկողութիւնը յետագայում պէտք է իրականացնի ՌԴ-ն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

# Ինչի Մասին Էր Իրանի Արտգործնախարարի Հայաստանեան Այցը. Հայաստանը «Խաչաձեւ Կրակի» Տակ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Անցեալ շաբաթը Հայաստանում հնարաւոր է գնահատել որպէս «իրանեան» շաբաթ: Կապանում բացուեց Իրանի հիւպատոսութիւնը, այդ առիթով Հայաստան ժամանեց Իրանի արտգործնախարարը, որն այստեղ հանդիպեց իր հայաստանցի գործընկերոջն ու նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին: Հուսէյն Աբդոլահիանը հերթական անգամ բարձրաձայնեց այն, ինչ Թեհրանը կրկնում է արդէն մի քանի շաբաթ՝ Կովկասում սահմանների անձեռնմխելիութեան մասին: Հայաստանում իհարկէ Իրանի արտգործնախարարը խօսեց ընդհուպ աննախադէպ շեշտադրումով՝ Հայաստանի անվտանգութիւնն Իրանի անվտանգութիւնն է: Իրանը խօսել էր թեմայի մասին տարբեր կերպ, նոյնացրել անգամ Հայաստանի սահմանը՝ Իրանի սահմանի եւ «կարմիր գծերի» հետ, բայց անվտանգութեան նոյնութեան շեշտադրումով խօսքը աննախադէպ է եւ հարկ արձանագրել, որ այն ամենեւին արարողակարգային լինել չի կարող, քանի որ խօսքը վերաբերում է կարեւորագոյն կատեգորիայի:

Իրանն ունի մեղմ ասած բաւարար պետական-քաղաքական աւանդութային յետագիծ, պատկերացնելու համար, որ յատկապէս արտաքին գործերի նախարարի մակարդակով այդօրինակ համեմատականները կամ զուգահեռները չեն կարող լինել ընդամէնը հնչեցուող խօսքեր, դրանք ենթադրում են ծանրակշիռ քաղաքական տողատակ: Բայց, արդեօ՞ք այն, ինչ ընկալւում է Հայաստանի հանրութեան շրջանում: Ասել կ՚ուզի, արդեօ՞ք դա նշանակում է, որ Իրանը պատրաստ է ցանկացած գնով ապահովել Հայաստանի անվտանգութիւնը եւ մասնաւորապէս Սիւնիքի անձեռնմխելիութիւնը, այնպէս, ինչպէս կ՚ապահովի իր տարածքի եւ սահմանի ամբողջութիւնը: Հայաստանում հանրութեան մի ստուար մաս այդ յայտարարութիւնները ընկալում է հենց այդպէս, եւ այդպիսի ընկալում մատուցւում է նաեւ քաղաքական եւ մետափորձագիտական շրջանակներից: Մինչդեռ, հարկ է թերեւս հասկանալ, որ նոյնացնելով Հայաստանի եւ Իրանի անվտանգութիւնը, Թեհրանը առնուազն շօշափում է մի բաւականին նուրբ տողատակ, որը Երեւանում պէտք է նկատել, հաշուի առնել, եւ որի հետ Երեւանը պարտաւոր է աշխատել՝ նուազագոյնը խնդրահարոյց իրավիճակներ չաւելացնելու համար:

Բանն այն է, որ Իրանը Հայաստանի անվտանգութիւնն իր անվտանգութեան հետ նոյնացնում է մի շրջափուլում, երբ Հայաստանը նկատելի սերտացնում է Արեւմուտքի հետ իր գործակցութիւնը եւ մեսիճները, եւ ոչ միայն քաղաքական այրերի, այլ ընդհուպ վարչապետի տիկնոջ գործունէութեան մակարդակում, որի ընդգծուած օրինակը Աննա Յակոբեանի այցն էր Ֆրանսա՝ Ելիսեեան խալատ, Բրիջիտ Մակրոնին հիւր, եւ գրառումը՝ այդ այցի հետ կապուած: Ամբողջ խնդիրն այն է, որ Իրանը Հայաստանի անվտանգութեան հետ իր անվտանգութիւնը նոյնացնում է այն ժամանակ, երբ Հայաստանն իրեն աւելի ու աւելի է նոյնացնում արեւմտեան ուղղութեան հետ: Սա նշանակում է, որ, կամ իրանեան վարչակազմը այդ կերպ փորձում է «միջնորդաւորուած» ակնարկ յղել Արեւմուտքին՝ որ արեւմտեան ուղղութեամբ աշխատանքի միջոցով Հայաստանի անվտանգութեան բարձրացումը Իրանը դիտում է նաեւ անուղղակիօրէն իր անվտանգութեան հարց, կամ լիովին հակառակը՝ Իրանը ակնարկում է, որ Արեւմուտքը Հայաստանում կամ Հայաստանն Արեւմուտքում՝ Իրանը կը դիտարկի որպէս Արեւմուտքի ներկայութիւն իր «թիկունքում»:

Շար.ը էջ 6

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

# 2022-ի 9 Ամսուան Մէջ Պետական Պիւտճէ Հաւաքագրուած է 3.5 Միլիար Տոլարի Հարկեր




2022 թուականի 9 ամիսներու ընթացքին Հայաստանի պետական պիւտճէ հաւաքագրուած է 1 թրիլիոն 412 միլիառ դրամի (3.5 միլիար տոլար) հարկային եկամուտներ, ինչ որ նախորդող տարիներու նոյն ժամանակահատուածին համեմատութեամբ աննախադէպ ցուցանիշ է: Հարկային եկամուտներու հաւաքագրման ծրագրային ցուցանիշը գերակատարուած է 77,2 միլիառ դրամով կամ 5.8%-ով:

Հարկային եկամուտները 2022-ի առաջին 9 ամիսներուն շուրջ 275 միլիառ դրամով կամ 24.2%-ով գերազանցած են 2021-ի նոյն ժամանակահատուածի ցուցանիշը, ինչ որ վերջին տարիներուն արձանագրուած ամենաբարձր աճի կշռոյթն է, ընդ որում՝ հարկ վճարողներուն եւ ֆիզիքական անձերու վերադարձուած է 172 միլիառ դրամ, ինչ որ 39,7 միլիառ դրամով կամ 30%-ով աւելին է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի ցուցանիշէն,

ԵԱՏՄ անդամ պետութիւններու միջեւ ներմուծման մաքսատուրքերու՝ ըստ նորմաթիւներու բաշխման արդիւնքով ներմուծման մաքսատուրքերու առնչութեամբ մուտքերը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ կրճատուած են 21,6 միլիառ դրամով կամ 35%-ով:

2022-ի 9 ամիսներու ընթացքին հարկային եկամուտներու մէջ ամենամեծ տեսակարար կշիռը կը կազմեն հանքարդիւնաբերութենէ ստացուած եկամուտները, որուն բաժին կ'իյնայ հարկային եկամուտներու շուրջ 8%-ը, կը յայտնեն ՊԵԿ-էն:

# Ընդդիմադիր Խմբակցութիւնները Մասնակցած Են Աժ Յայտարարութիւններու Ժամին

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները երկար ժամանակ Ազգային Ժողովի նիստերը պոյքոթելէ յետոյ, Հոկտեմբեր 25-ին մասնակցեցան ԱԺ յայտարարութիւններու ժամին. ընդդիմադիր պատգամաւորները հանդէս եկան ելոյթներով՝ յատկապէս արտաքին քաղաքականութեան եւ անվտանգային ոլորտներուն մէջ իշխանութեան գործողութիւնները քննադատելով:

«Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեան անդրադարձաւ խաղաղութեան գործընթացին: Ան իշխանութիւնը մեղադրեց Արցախի հարցով բանակցութիւնները ձախողելու, նաեւ նախընտրական խոստումներէն հրաժարելու մէջ:

Թադեւոս Աւետիսեանը իշխանութիւնը մեղադրեց տնտեսական անվտանգութեան սպառնալիքներու նուազեցման եւ չէզոքացման գործընթացը ձախողելու մէջ: «Իշխանութիւնն իր վերջում ծրագրում ամրագրել էր, որ մեր տարածաշրջանում տնտեսական ապաշրջափակումը, հաղորդակցութիւնների բացումը Հայաստանի կայուն տնտեսական զարգացման հիմնապայման պէտք է լինեն: Արդէն ամբողջանում է պատկերը, որ այս ծրագրային դրոյթը եւս ձախողւում է», տեսակէտ յայտնեց պատգամաւորը:

Ըստ անոր՝ Հայաստանը դուրս կը մնայ տարածաշրջանային նոր հաղորդակցութիւններէն: Պատգամաւորը տնտեսական անվտանգութեան նոր սպառնալիքներ կը տեսնէ: Ըստ պատգամաւորին՝ Հայաստանի արտաքին տնտեսական զարգացման հիմնական առաւելութիւններն ու աւանդական ուղղութիւնները՝ Ռուսիա, Իրան, Ջինաստան, Հնդկաստան, կ'անտեսուին, այսպիսով երկիրը կը կորսնցնէ բարեկամ եւ ռազմավարական դաշնակից երկիրներու հետ տնտեսական կապերու խորացման առկայ իրական ներուժը:

# Հայաստանի Մէջ Աննախադէպ Ծաւալի Շինարարութիւն Կ'ընթանայ

Հայաստանի շուկային մէջ շաղախի որոշակի պակասի երեւոյթներ կը նկատուին: Այս մասին կառավարութեան նիստին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Սա նշանակում է, որ Հայաստանում այն ծաւալի շինարարութիւն կայ, որ շուկայում պակաս է յառաջացել եւ մեր տեղի արտադրողները չեն հասցնում շուկային մատակարարել: Դրա համար Հոկտեմբերի 10-ից շաղախի համար գործող ներմուծման տուրքը իջեցուել է: Յոյս ունենք, որ սրանով խնդիրը կը լուծուի: Սա մի կողմից լաւ է այն առումով, որ շատ մեծ ծաւալի շինարարութիւն է տեղի ունենում երկրում, միւս կողմից էլ լաւ չէ, որ կարող է դրա պատճառով շինարարութիւնը դանդաղել», նշեց վարչապետը՝ յորդորելով, որ տնտեսական մրցակցութեան յանձնաժողովը ուշադիր ըլլայ գերշահոյթ ստանալու ախորժակները որոշակիօրէն զսպելու համար:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Գնէլ Սանոսեան յաւելեց, որ պակաս կայ ոչ միայն շինանիւթի հետ կապուած, այլեւ շինարարական ընկերութիւններու եւ աշխատակիցներու: «Մենք անընդհատ փորձում ենք լաւարկել գնումների ոլորտը», յաւելեց Սանոսեան:

# Փտածութեան՝ Մեր Երկրին Հասցուցած Վնասը Պէտք Է Վերականգնուի. Նիկոլ Փաշինեան



Նիկոլ Փաշինեան Հակափտածութեան Կոմիտէն ներս կայացած հանդիպումի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Հակափտածութիւն կոմիտէ եւ ներկայ գտնուած է Հակափտածութիւն կոմիտէի ծառայողի օրուան եւ կառոյցի կազմաւորման առաջին տարեդարձին նուիրուած միջոցառման:

Հակափտածութիւն կոմիտէի կազմաւորման եւ գործունէութեան մէկ տարուան մէջ կատարուած աշխատանքներուն վերաբերեալ զեկոյցով հանդէս եկած է կառոյցի նախագահ Սասուն Խաչատրեանը: Ան ըսած է, որ մէկ տարուան մէջ քննիչներու վարոյթին մէջ գտնուող գործերուն թիւը աւելի քան եռապատկուած է. 2021-ի Հոկտեմբեր 23-էն մինչեւ օրս Հակափտածութիւն կոմիտէին մէջ քննուած է 1042 քրէական վարոյթ, մինչդեռ նախորդող մէկ տարուան ընթացքին ՀՀ Յատուկ Քննչական Ծառայութեան մէջ քննուած էր 565 քրէական գործ: Այժմ կը քննուի 366 քրէական վարոյթ, մինչդեռ 2021-ի Հոկտեմբեր 23-ին գործունէութիւնը սկսելով Հակափտածութիւն կոմիտէի վարոյթին մէջ քննուած է 114 քրէական գործ:

Վարչապետ Փաշինեանը հանդէս եկած է ելոյթով, որուն մէջ, մասնաւորապէս, նշած է.

«Հակափտածութեան պայքարը մեր իշխանութեան, մեր կառավարութեան ամենակարեւոր հանրային պարտաւորութիւններից է, այսինքն՝ հանրութեան առաջ ստանձնած պարտաւորութիւններից: Եթէ փորձենք պատասխանել հարցին, թէ որքանով է կատարւում այդ պարտաւորութիւնը, թերեւս առաջինն ընդունուած է դիմել միջազգային համաթիւերին եւ վարկանիշներին: Եւ կը տեսնենք, որ միջազգային բոլոր զեկոյցներում Հայաստանի Հանրապետութիւնը յիշատակւում է որպէս հակափտածութեան քաղաքականութեան ոլորտում եւ փտածութեան դէմ պայքարում էական յառաջընթաց գրանցած երկիր, ընդ որում՝ այդ յառաջընթացը շարունակական է:

«Հիմա միջազգային հարթակներից վերադառնանք Հայաստանի Հանրապետութիւն եւ ինքներս մեզ հարց տանք, թէ արդեօք մենք գոհ ենք Հայաստանում վարուող հակափտածութեան քաղաքականութեան արդիւնքներից եւ արդիւնաւէտութիւնից: Պիտի արձանագրենք, որ մենք մեծ հաշուով, չենք կարող ասել, որ դժգոհ ենք, բայց, միւս կողմից, նաեւ չենք կարող ասել, որ գոհ ենք: Ոչ թէ այն պատճառով, որ աշխատանքներ չեն արուել, եւ արդիւնքներ չկան, այլ ամենաշատը այն պատճառով, որ, այնուամենայնիւ, հակափտածութեան պայքարի առումով՝ հանրութեան ակնկալիքները - ընդ որում, դրանք կարող են լինել առարկայական եւ չափազանցուած - հանրութեան ակնկալիքների մի առարկայական հատուած մենք չենք իրագործել, եւ դա պէտք է ընդունենք ու խոստովանենք:

Ես ուզում եմ յստակ ասել, որ մեր քաղաքական կամքը նոյնիսկ աւելացել է, աւելին, որովհետեւ այն ժամանակ գուցէ մենք ի վիճակի չէինք, նոյնիսկ ընդդիմադիր լինելով, գնահատել, թէ փտածութիւնը ինչպիսի խորը եւ ողբերգական հետեւանքներ է ունեցել եւ ունենում մեր իրականութեան վրայ: Հիմա մենք դա գիտենք առաւել մանրամասն, մենք ամէն օր առնչւում ենք այդ խնդիրին հետ, մենք ամէն օր մեր մաշկի վրայ դա զգում ենք որպէս պատասխանատու մարդիկ, ովքեր պէտք է երկրի ճակատագրի հետ կապուած խնդիրներ լուծեն»:

«Մեր երկրին հասցուցած վնասը պէտք է վերականգնուի», ըսած է Նիկոլ Փաշինեան:

# Կառավարութիւնը Կ'առաջարկէ 15 Տարուան Բանտարկութիւն Սահմանել՝ Ինքնիշխանութենէն Հրաժարելու Կոչերուն Համար

Կառավարութիւնը կ'առաջարկէ Հայաստանի ինքնիշխանութենէն հրաժարելու հրապարակային կոչերուն համար քրէական պատիժ նախատեսել: Քրէական օրէնսգիրքի փոփոխութիւններու նախագիծը երկու օր է հանրային քննարկման ներկայացուած է:

Սա կանխարգելիչ նպատակ ունի, կ'ըսէ Ազգային Ժողովի Պետաիրաւական Յանձնաժողովի նախագահ Վլատիմիր Վարդանեանը. «Սա եւս ուղղուած է այս կանխարգելիչ գործառոյթը իրականացնելու, նաեւ հիմքեր ստեղծելու, որպէսզի անձինք պետականութեան դէմ ուղղուած գործողութիւններ չիրականացնեն»:

Գործող օրէնքով քրէական պատասխանատուութիւն նախատեսուած է տարածքային ամբողջականութիւնը խախտելու, բռնութիւն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետութեան տարածքը կամ մասը այլ պետութեան յանձնելու համար:

## ԼՈՒՐԵՐ

# «Հայաստան Այցելած Եմ Ճանապարհային Քարտէզ Սահմանելու Համար». Իրանի ԱԳ Նախարար



Հայաստանի եւ Իրանի արտաքին գործոց նախարարները Կապանի մէջ Իրանի գլխաւոր հիւպատոսութեան բացման արարողութեան ընթացքին

*«Հայաստան այցելած ենք, որպէսզի պարոն Արարատ Միրզոյեանի հետ երկարաժամկէտ կտրուածքով երկու երկիրներուն համար սահմանենք մեր ճանապարհային քարտէզը», վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման ժամանակ ըսած է Իրանի արտաքին գործերու նախարար Հըսէյն Ամիր Ապտոլլահիանը՝ ճանապարհային քարտէզին մանրամասներ չյայտնելով:*

*Իրանի արտաքին գործերու նախարարը շեշտած է, որ կը կարեւորէն հարեւան պետութիւններու հետ յարաբերութիւնները՝ յատկապէս Հայաստանի Հանրապետութեան հետ:*

*Ընդծելով, որ երկկողմ յարաբերութիւններու օրակարգը շատ յագեցած է, վարչապետ Նիկոլ Փաշինեան իր հերթին այդ օրակարգը աւելի երկարաժամկէտ ծրագրաւորման տրամաբանութեան մէջ դնելու ցանկութիւն յայտնած է:*

*Ըստ վարչապետի գրասենեակին՝ զրուցակիցները քննարկած են երկկողմ յարաբերութիւններու օրակարգին վերաբերող հարցեր, անդրադարձած են տնտեսական համագործակցութեան: Երկուստեք կարեւորուած է առեւտրաշրջանառութեան ոլորտին մէջ առկայ ներուժի լիարժէք իրացումը:*

*Միտքեր փոխանակուած են տարածաշրջանային զարգացումներու եւ անվտանգային միջավայրին շուրջ: Վարչապետը կարեւորած է իրանեան կողմի յստակ գնահատականները եւ ստեղծուած իրավիճակին մէջ երկկողմ սերտ գործակցութիւնը:*

*Իրանեան լրատուամիջոցներուն հաղորդմամբ, Հայաստանի վարչապետին հետ հանդիպման ընթացքին իրանցի արտաքին գործերու նախարարը խօսած է Հարաւային Կովկասի երեք երկիրներու եւ տարածաշրջանի երեք տէրութիւններու «3+3» հարթակի հնարաւորութիւնը օգտագործելու անհրաժեշտութենէն, դարձեալ դէմ արտայայտուած է տարածաշրջանին մէջ արտաքին ուժերու ներկայութեան:*

*Ապտոլլահիանը Հոկտեմբեր 20-ին ժամանած էր Երեւան: Ան Սիւնիքի մարզային կեդրոն Կապանի մէջ մասնակցած էր Իրանի գլխաւոր հիւպատոսութեան բացման արարողութեան: Ան յայտնած է, որ Իրանը «Հայաստանի Հանրապետութեան եւ տարածաշրջանի անվտանգութիւնը կը համարէ իր անվտանգութիւնը». «Մեր քաղաքականութիւնն է յարգել տարածքային ամբողջականութիւնը եւ միջազգայնօրէն ճանչցուած սահմանները», ըսած է Ապտոլլահիան՝ ընդգծելով, որ Հայաստանը կը հանդիսանայ Հիւսիս-Հարաւ միջանցքի կարեւոր մաս, եւ իրանեան կողմը կը պատրաստուի առաւելագոյն ջանքեր գործադրելու այս տարանցիկ ուղին զարգացնելու համար:*

*Իրանի արտաքին գործերու նախարարը հանդիպած է նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի հետ:*

# Թրքական Կողմը Հայաստանի Հետ Կարգաւորման Գործընթացը Պէտք Է Աւելի Ու Աւելի Քիչ Կապէ Հայաստան-Ատրպէյճան Բանակցային Գործընթացին Հետ. Միրզոյեան

*ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան կը շեշտէ, որ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած գործընթացին մէջ Թուրքիան պէտք է կարգաւորման գործընթացը աւելի ու աւելի քիչ կապէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցային գործընթացին հետ, հակառակը՝ պէտք է գիտակցի, որ Հայաստան-Թուրքիա երկխօսութեան յաջողութիւնը կրնայ ունենալ... կարող է իր դրական ազդեցութիւնը թողել Հայաստան-Ատրպէյճան բանակցային գործընթացին վրայ:*

*Այս մասին ՀՀ արտաքին գործերու նախարարը ըսաւ Իրանի արտասքին գործերու նախարար Հըսէյն Ամիր Ապտոլլահիանի հետ համատեղ ասուլիսին՝ անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին վերաբերեալ հարցին:*

*«Երկու երկրները նշանակել են իրենց յատուկ ներկայացուցիչներին, որոնք արդէն 4 հանդիպում են ունեցել, առարկայական հանդիպումներ են ունեցել երկու երկրների՝ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու եւ երկու երկրների միջեւ Թուրքիայի կողմից փակուած սահմանը բացելու ուղղութեամբ», ըսաւ Միրզոյեան:*

*Նախարարը յիշեցուց, որ Թուրքիոյ արտաքին գործերու նախարարին հրաւէրով ինք մասնակցած է Անթալիոյ դիւանագիտական համագումարին, օրեր առաջ տեղի ունեցած է նաեւ Հայաստանի վարչապետին եւ Թուրքիոյ նախագահին հանդիպումը:*

*«Գործընթացը համարում եմ դրական: Ուղենիշը յարաբերութիւնների հաստատումը եւ սահմանի բացումն է: Միեւնոյն ժամանակ, կարծում եմ, որ Թուրքիայի մեր զրուցակիցները պէտք է աւելի ու աւելի քիչ այս գործընթացը կապեն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցային գործընթացի հետ: Եւ հակառակը՝ պէտք է գիտակցեն, որ Հայաստան-Թուրքիա երկխօսութեան յաջողութիւնը կարող է իր դրական ազդեցութիւնը գործել Հայաստան-Ատրպէյճան բանակցային գործընթացի վրայ: Երբեմն հարցերի վերաբերեալ հնչում են արտայայտութիւններ, որոնք հիմք են տալիս մտածելու, որ, օրինակ, նոյն Թուրքիան գուցէ արտատարածքային կարգավիճակով միջանցքի բացման հարցում աւելի շահագրգիռ է, քան, օրինակ, Ատրպէյճանը», ըսաւ Միրզոյեան:*

# Ցեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութիւնը

Շարունակուած էջ 1-էն

*միջազգային հանրութեան եւ ակադեմական ու մշակութային կազմակերպութիւններուն՝ դատապարտելու Ատրպէյճանի բռնութիւնն ու ատելութեան խօսքը Հայաստանի դէմ եւ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները Ատրպէյճանին ստիպելու դադրեցնել ռազմական գործողութիւններն ու ատելութեան խօսքը Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի բնիկ հայերու դէմ,*

*Ատրպէյճանին՝ կատարելու ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանի 2021 թուականի Դեկտեմբեր 7-ի որոշումը,*

*Ատրպէյճանին՝ ետ քաշելու իր զօրքերը Հայաստանի Հանրապետութեան տարածքէն եւ յարգելու արցախահայութեան ինքնորոշման իրաւունքը, որ երաշխաւորուած է Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կանոնադրութեամբ (Գլուխ I, յօդուած 2),*

*միջազգային հանրութեան՝ զսպելու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի մենատիրական վարչակարգը, որ պատասխանատու է 2020 թուականի Սեպտեմբերէն Հայաստանի եւ հայերու դէմ իրականացուած յարձակման (յանցագործութիւններ խաղաղութեան դէմ), ռազմական յանցագործութիւններու եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններուն համար:*

# Միջազգային Խաղցողները Կը Ստորադասեն Արցախի Հարցը Եւ Նպաստաւոր Առաջարկներ Չեն Ներկայացներ. ԼՂ Նախագահ

*«Մենք պէտք է մեր հասարակութեանը ներկայացնենք իրական պատկերը, եւ այդ իրականութեան մէջ մէկ-մէկ լինում են դառը ճշմարտութիւններ կամ այնպիսի թեմաներ, որը հաճելի չէ», Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեան Լեռնային Ղարաբաղի հարցին մասին վերջին մէկուկէս ամսուան «դառն ճշմարտութիւններու» փակագիծերը բացաւ Արցախի Հանրային հեռուստաընկերութեան եթերով: Տարածաշրջանին մէջ Արցախի հարցնը այլեւս օրակարգային չէ: Գլխաւորը Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան պայմանագիրն է:*



Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեան

*«ԱՄՆ-ի աշխուժութիւնը խաղաղութեան պայմանագրի կամ ընդհանուր առմամբ Ատրպէյճան-Հայաստանի յարաբերութիւնների հետ կապուած, Եւրոպայի՝ Շարլ Միշելի, Մաքրոնի, բազմաթիւ հանդիպումները կամ հեռախօսազանգերը Ատրպէյճանի ղեկավարի, նախագահի, կամ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի, մեզ համար պարզ է, չէ՞, որ այդ բոլոր խօսակցութիւնների, հանդիպումների հիմքում առաջին հերթին այսօր խաղաղութեան պայմանագիրն է՝ Հայաստան-Ատրպէյճան», ըսաւ Արայիկ Յարութիւնեանը:*

*Յարութիւնեանի գլխաւորած պատուիրակութիւնը անցեալ շաբաթ Հայաստան կը գտնուէր, տարբեր բարձրաստիճան պաշտօնեաներու, այդ շարքին՝ Հայաստանի վարչապետին հետ հանդիպումներուն ընթացքին փորձած են պարզել, թէ ինչ կը բանակցին Արցախի հարցով:*

*Արեւմուտքը, որ աշխոյժ է Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան հաստատման գործով, կը ստորադասէ ղարաբաղեան խնդիրը, եւ նպաստաւոր առաջարկներ չի ներկայացներ, ըսաւ Արայիկ Յարութիւնեանը:*

*«Միջազգային խաղացողները, որոնք փորձում են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան այդ բանաձեւի կամ այմանագրի հետ կապուած իրենց ծառայութիւնները մատուցել, արցախեան խնդիրը ստորադասում են եւ, բաց պէտք է ասենք մեր հասարակութեանը, այդքան էլ նպաստաւոր առաջարկութիւններ չեն ներկայացնում», նշեց Արցախի Նախագահը:*

*«Մենք պայքարելու ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի կարեւոր այդ կարգի շրջանակներում եւ պէտք է նաեւ հաստատենք, որ այն որեւէ կապ չունի տարածքային ամբողջականութեան հետ», շեշտեց Արցախի Նախագահը:*

## ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան Հանդիպած է Պուլկարիոյ Հայ Համայնքի Ներկայացուցիչներուն Հետ



Նախագահ Վահագն Խաչատուրեան Պուլկարիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպումի ընթացքին

Պուլկարիոյ Հանրապետութիւն կատարած պետական այցի շրջանակներուն մէջ Նախագահ Վահագն Խաչատուրեան հանդիպած է Պուլկարիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպման ընթացքին Նախագահը հակիրճ ամփոփած է Պուլկարիա կատարած պետական այցին արդիւնքները, անդրադարձած է ներկայիս Հայաստանի եւ տարածաշրջանին մէջ առկայ զարգացումներուն, Արցախի հակամարտութեան կարգաւորման հիմնախնդիրին: Նախագահը կարեւորած է այս օրերուն Հայաստանի մէջ տեղակայուած ԵՄ դիտորդական առաքելութեան իրականացումը:

«Մենք մեր գործընկեր երկրների աջակցութեան կարիքն ունենք: Խօսքը գնում է ԵՄ աջակցութեան մասին, որի հիմնական նպատակն է Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանային վէճի խնդիրն արձանագրել եւ հետագայում վերահսկողութիւն իրականացնել:

«Մենք յոյս ունենք, որ դիտորդական առաքելութիւնը մեզ կ'օգնի արձանագրել այն խախտումները, որոնք տեղի են ունեցել Ատրպէյճանի կողմէ եւ դրանք կը ներկայացնի միջազգային ատեաններում, որից յետոյ պահանջը՝ զօրքերը հետ քաշելու վերաբերեալ, իրականութիւն կը դառնայ: Այս առումով ե՛ւ Պուլկարիայի, ե՛ւ ԵՄ անդամ այլ երկրների օգնութիւնը շատ կարեւոր է մեզ համար,- ըսած է Նախագահ Խաչատուրեանը: -Ատրպէյճանը յայտարարում է, որ մենք ցանկութիւն ունենք իրենց տարածքային ամբողջականութիւնը չճանաչել, իրենց տարածքները գրաւել: Մենք երբեւիցէ այդպիսի ցանկութիւն չենք ունեցել: Մեր ցանկութիւնն է ապրել խաղաղ», ըսած է Նախագահը:

Հանդիպման ընթացքին Նախագահ Խաչատուրեան անմիջական մթնոլորտի մէջ հանգամանալից պատասխանած է համայնքի ներկայացուցիչներու բարձրացուցած հարցումներուն, որոնք կը վերաբերէին հայ-թրքական յարաբերութիւններուն, Հայաստանի ուժանիւթային մարտահրաւէրներուն եւ Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքականութեան, տնտեսական ու հասարակական կեանքի տարբեր ոլորտներուն:

## ԵԱՀԿ Կարիքներու Գնահատման Խումբը Այցելած է Սիւնիքի Մարզ




ԵԱՀԿ կարիքներու գնահատման խումբը այցելած է Սիւնիքի մարզ, հանդիպած է մարզպետարանի ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպման ընթացքին ԵԱՀԿ պատուիրակութեան ներկայացուած են Սեպտեմբեր 13-ին Ատրպէյճանի զինուած ուժերուն կողմէ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքին հանդէպ իրականացուած վերջին յարձակման հետեւանքները:

ԵԱՀԿ ներկայացուցիչները այցելած են նաեւ սահմանամերձ բնակավայր՝ ծանօթանալու իրավիճակին:

ԵԱՀԿ առաքելութիւնը Հայաստան կը գտնուի ԵԱՀԿ-ի մէջ նախագահող Լեհաստանի ներկայացուցիչ գնդապետ Ռոպերթ Արքատիուշ Տքաչիքի գլխաւորութեամբ՝ պաշտօնական Երեւանի հրաւէրով:

## Մինչեւ Տարեվերջ Պիտի Բացուի «Armsat-1» Արբանեակի Կառավարման Կեդրոն




Հայաստանի՝ տիեզերք արձակուած առաջին արբանեակի՝ «ArmSat-1»-ի կառավարման կեդրոնը պիտի բացուի մինչեւ այս տարուան վերջ: Այս մասին ըսաւ ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարի տեղակալ Աւետ Պօղոսեանը:

«Մեր արբանեակը նախատեսուածի պէս թռնում է տիեզերական տարածութիւնում եւ ծրագրաւորուած թեսթային գործողութիւններ է անցնում: Այս պահին կարող եմ ասել, որ այդ գործողութիւնները տեղի են ունենում ժամանակացոյցից մի փոքր արագ, թեսթաւորումը մեր սպասածից աւելի դրական զարգացում ունի: Ինչ վերաբերում է արբանեակի հետ կապուած կառավարման կեդրոնին եւ միւս ենթակառուցուածքներին, ապա նոյնպէս վստահութիւն եմ յայտնում, որ նախատեսած ժամանակացոյցից շուտ այն կ'ունենանք: Այսինքն՝ մինչեւ տարուայ վերջ», պատասխանելով «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Սարգիս Խանդանեանի հարցումին՝ ըսաւ Աւետ Պօղոսեանը:

Նախարարի տեղակալը նշեց, որ ֆինանսական միջոցները յատկացուած են, որոշումները կան, եւ մինչեւ տարուայ վերջ Հայաստանի մէջ պիտի ըլլայ արբանեակի կառավարման կեդրոն:

«Յատկացումները կան, աշխատանքները հէնց հիմա էլ ընթացքի մէջ են: Տարեվերջից մի փոքր էլ շուտ բոլորս բացմանը ներկայ կը գտնուենք», եզրափակեց Պօղոսեան:

Հայաստանի առաջին արբանեակը «ArmSat-1»-ը տիեզերք արձակած է 2022 թուականի Մայիս 25-ին: Կը նշուի, որ «ArmSat-1»-ի հաղորդած տեղեկութիւնները հասանելի պիտի ըլլան միայն Հայաստանի Հանրապետութեան: Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնած էր, որ արբանեակին ուղարկած տուեալները Հայաստանի մէջ պիտի օգտագործուին սահմանները հսկելու, արտակարգ իրավիճակները կանխարգելելու եւ կառավարելու, շրջակայ միջավայրը պահպանելու, քաղաքաշինութեան, ճանապարհաշինութեան, երկրագիտութեան եւ այլ ոլորտներուն մէջ: Արբանեակի արձակումը կատարուած է հայկական պետական «Կէոքոսմոս» եւ սպանական «SANTLATIS» ընկերութիւններու համատեղ աշխատանքին շնորհիւ:

## Կոնստանդին Զաթուլինի Հայաստան Այցը Համարուած է Անցանկալի



Ռուսիոյ Պետտումայի պատգամաւոր Կոնստանդին Զաթուլին

Ռուսիոյ Պետտումայի պատգամաւոր Կոնստանդին Զաթուլինի Հայաստան այցը համարուած է անցանկալի: Այդ մասին Զաթուլին գրած է Թելեկրամով՝ հրապարակելով Հայաստանի Ազգային Ժողովին նամակը:

Նամակին մէջ մասնաւորապէս կը նշուի. «ՀՀ Ազգային Ժողովի ղեկավարութեան անունով կը յայտնենք, որ, ցաւօք, Հայաստանի Հանրապետութեան մասին վերջին շրջանի Ձեր յայտարարութիւնները կը վնասեն մեր պետութիւններու բարեկամական եւ դաշնակցային յարաբերութիւններու զարգացման: Այս մէկով պայմանաւորուած, ապագային Ձեր այցը Հայաստանի Հանրապետութիւն կը համարուի անցանկալի»:

Կոնստանդին Զաթուլինը սա վիրաւորական քայլ գնահատած է՝ նշելով, որ անակնկալի եկած է:

Յիշեցնենք, որ իր հրապարակային հարցազրոյցներուն մէջ Զաթուլին բազմիցս մեղադրած է ՀՀ իշխանութիւնը 44-օրեայ պատերազմի պարտութեան համար:

Աւելին՝ ներխուժելով Հայաստանի ներքաղաքական կեանք՝ Զաթուլինը մէկ անգամ չէ, որ բարձրաձայնած է, թէ Նիկոլ Փաշինեանը պէտք է հեռանայ: Զաթուլին հաստատած էր նոյնիսկ ՀՀ իշխանութիւնները մեղադրել հայ-ռուսական յարաբերութիւններուն մէջ սեպ խրելու համար: Իսկ Հայաստան կատարած վերջին այցելութեան ժամանակ «Երկիր Մեդիա»-ին տուած հարցազրոյցին ընթացքին ան մեղադրած էր վարչապետը ՀՀ ինքնիշխան տարածքով «միջանցք» ստորագրելու համար: «Հնարաւոր միջանցքի շուրջ հարցերը պէտք է տալ ստորագրողներուն, «միջանցքը» ստորագրած է Փաշինեանը», ըսած էր Զաթուլին:

# Հայաստան Արդիական Զինատեսակներու Որոնումին Մէջ

Շարունակուած էջ 1-էն

րը, որոնք, ըստ Միացեալ Նահանգներու պնդումներուն, վերջերս սկսած են օգտագործուիլ Ուքրանիոյ պատերազմի ընթացքին: Իրանեան ԱԹՍ-ները մէկ անգամ օգտագործման համար են: Թիրախին հարուածելէ ետք, անոնք կը փճանան եւ անոր համար ալ կը կոչուին «քամաքազի», այսինքն ինքնասպանական ԱԹՍ-ներ:

Իրանէն զինատեսակ գնելու հարցը Հայաստանի համար կրնայ դառնալ խնդրայարոյց: Միացեալ Նահանգները վստահաբար լաւ աչքով պիտի չնայի նման գործարքներուն, նկատի առնելով Իրանի դէմ հաստատուած խիստ պատժամիջոցները: Մինչեւ օրս, Արեւմուտքը չէ առարկած Երեւանի եւ Թեհրանի միջեւ գոյութիւն ունեցող տնտեսական կապերուն, նկատի ունենալով Հայաստանի աշխարհագրական կացութիւնը, երբ ան կը գտնուի դրացի երկիրներուն կողմէ շրջափակման մէջ: Սակայն, տնտեսական կապերէն ռազմական գործակցութեան անցումը Արեւմուտքի կողմէ հաւանաբար արժանանայ հակազդեցութեան:

Ոմանք յոյս ունին, որ կարելի է զէնք ապահովել նաեւ Ամերիկայէն ու Եւրոպայէն: Սակայն, այս պարագան քիչ հաւանական կը թուի, նկատի ունենալով որ, Հայաստան մաս կը կազմէ ՆԱԹՕ-ի հակառակորդ՝ ՀԱՊԿ-ի ռազմական դաշինքին եւ իր տարածքին վրայ կայ ռուսական ռազմակայան:

Մինչեւ օրս, Հայաստան պաշտօնապէս ո՛չ կը հաստատէ եւ ոչ ալ կը հերքէ պաշտպանութեան ոլորտին վերաբերող հրապարակումները: Սակայն յստակ է որ, Երեւան այլեւս կաշկանդուած չզգար մէկ աղբիւրէ զէնք գնելու եւ ոչ ալ ռազմավարական դաշնակիցը վշտացնելու հարցով: Ներկայիս, Հայաստանի տարածքային ամբողջականութիւնն է որ վտանգուած է ու հարցական տակ դրուած անոր անկախութիւնը: Նման պայմաններուն տակ ժամանակ չկայ յապաղելու եւ կամ այլոց դիւրազգացութիւնները նկատի առնելու:

Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքի պարզուած երեւոյթները եկան ցոյց տալու որ, երկար տարիներ Հայկական բանակը մատնուած է անտեսումի: Այն ժամանակ երբ թշնամի երկիրը միլիարաւոր տոլարներ ծախսած է իր բանակը ուժեղացնելու համար, Հայաստան նոյն նպատակին համար ծախսած է համեմատաբար շատ փոքր գումար, իսկ անոնց մէկ մասը վատնուած է փտածութեան ու կաշառակերութեան պատճառաւ: Այսպիսով, խախտուած է Հայաստանի եւ Ատրպէյճանի բանակներուն միջեւ հաւասարակշռութիւնը, որ գոյութիւն ունեցած է մինչեւ 2000 թուականը: Անկէ ետք Ատրպէյճանի ռազմական ծախսերը տասնապատիկ աւելցած են, իսկ Հայաստանինը մնացած է նոյն տեղը:

Կառավարութիւնը այժմ կը փորձէ վերականգնել իրավիճակը: 2023 տարու պիւտճէով պաշտպանութեան ոլորտի յատկացումները աւելցած են 400 միլիոն տոլարով, հասնելու համար 1.2 միլիար տոլարի, որ աննախընթաց է անկախ Հայաստանի պատմութեան մէջ:

Ներկայիս Հայաստան կը գտնուի արդիական զինատեսակներու որոնումին մէջ ու կը փորձէ մատակարարման այլընտրանքային աղբիւրներ գտնել՝ սեղմ ժամանակուայ ընթացքին: Այս գործընթացը սակայն կը կարօտի տարիներու, իսկ Հայաստանի համար այդ ժամանակը բաւականին սուղ է իսկ ճանապարհը վտանգներով լի:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**
**«ՄԱՍԻՍ»**

# Մենք Պէտք է Հայերուն Ռազմական Աջակցութիւն Ցուցաբերենք

Շարունակուած էջ 1-էն

*տաքին գործերու նախարար Քաթրին Քոլոնային ըսած է.*

*Ինչպէ՞ս հաւատալ այն Եւրոպային, որ մէկ կողմէ քաղաքացիական առաքելութիւն կ'ուղարկէ Հայաստան, իսկ միւս կողմէ՝ կ'ամրապնդէ իր համագործակցութիւնը Ատրպէյճանի հետ՝ ուժանիւթի ոլորտին մէջ: Եւրոյանձնաժողովի նախագահ Ուրսուլա վոն տեր Լէյէնի ներկայացմամբ՝ Ատրպէյճանը վստահելի գործընկեր է», ըսած է Պուայէն ու ընդգծած, որ կազը, որ կը պատրաստուի շահագործելու Ատրպէյճանը, իրականութեան մէջ Ռուսիոյ է:*

*«Եւ հարկ է ըսել, որ Ռուսիան ու Ադրպէյճանը կը համագործակցին ու կը հասկնան իրար. Փութին կը փափաքի նոր աշխարհագրութիւն ստեղծել, Ալիեւը՝ չեղարկել պատմութիւնը: Եւ բոլորս այսօր վկան ենք այս իրողութեան:*

*Հաշուի առնելով այս ամէնը՝ հայկական կողմը Ատրպէյճանին տարածք կամ միջանցք տրամադրելը մերժելի է համարում, բայց դէմ չէ, եթէ Ատրպէյճանը Նախիջեւանի հետ կապուի 40 քիլոմեթրանոց էստակադայով՝ կամրջակապով (overpassing elevated road), որը կարող է լինել Ատրպէյճանի սեփականութիւնը:*

*2001-ի ամրանը ԵՄ պատուիրակների հետ ՀՀ բարձր ղեկավարութեան հանդիպման ընթացքում հայկական կողմը ներկայացնում է, թէ ինչ է քննարկուել Քի Ուեսթում.*

*1. Լղ Կարգավիճակը,*

*2. Հայաստանի Կապը Լղ-ի Հետ,*

*3. Ատրպէյճանի Կապը Շուշիի Հետ,*

*4. Փախստականների Վերադարձը, Հիմնականում՝ Շուշի:*

*«Մենք կարծում էինք, որ Փարիզում որոշակի պայմանաւորուածութիւններ ենք ձեռք բերել, որպէսզի առաջ շարժուենք, բայց յանկարծ Ալիեւը նահանջեց եւ նոր պայմաններ առաջ քաշեց: Կարգավիճակի առումով ըստ էութեան մենք ստանում էինք առաւելագոյն հնարաւորը, նոյնը, ինչ միջանցքի դէպքում էր: Փոխարէնը նրանք ազատ եւ անարգել կապ էին ստանում Նախիջեւանի հետ, սակայն նրանց ելքի (access) կարգավիճակը նոյնական չէր մերինի հետ: Ազատ եւ անարգել երթեւեկութիւնը ենթադրում էր, որ ատրպէյճանական աւտոմեքենաները չէին կանգնեցուելու ճանապարհին եւ չէին անցնելու Հայաստանի մաքսային ծառայութեան միջոցով: Ակնկալւում էր, որ անկախ նրանից, թէ իրենց ճանապարհը կը հատի Հայաստանի բնակավայրերն ու Իրանի հետ սահմանը, այն պէտք է լինէր վերգետնեայ: Այս տարբերակով, հաշուի առնելով, որ ճանապարհի որոշակի հատուածներ լինելու են անմիջապէս գետնի վրայ, Հայաստանի տարածքը կարճանում էր ութ մեթրով»,- ասւում է ՀՀ ԱԳՆ-ում պահուող խորհրդապահական այս գրութեան մէջ:*

*Այս տեքստից ուշագրաւ է յատկապէս երկու հատուած.*

*1. Ազատ Եւ Անարգել Երթեւեկութիւնը Ենթադրում Էր, Որ Ատրպէյճանական Աւտոմեքենաները Չէին Կանգնեցուելու Ճանապարհին Եւ Չէին Անցնելու Հայաստանի Մաքսային Ծառայութեան Միջոցով,*

*2. Հայաստանի Տարածքը Կարճանում Է 8 Մեթրով:*

Հայկական Ուսումնասիրութիւններու Անի Կենդրոն

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀՐԱՒԻՐԷ ԲՈԼՈՐ ՀԱՃՆՑԻՆԵՐԸ

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
102-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 30, 2022
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA. 91107
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԺԱՄԸ 11:00
և Հ.Բ.Ը.Մ.-ի << Պոեաճեան >> սրահ
2495 E. Mountain St. Pasadena, CA. 91104
ՀՈԳԵՃԱՇ և ՃԻՏԱՊՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԸ 1:00

THE COMPATRIOTIC UNION OF HADJIN
INVITES ALL HADJINTZIS ON THE OCCASION OF THE

102-nd ANNIVERSARY
OF THE MARTYRS OF HADJIN

SUNDAY, OCTOBER 30, 2022
St. Gregory Armenian Apostolic Church
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA. 91107
REQUIEM SERVICE AT 11:00 A.M.
AND A.G.B.U. << BOYADJIAN >> HALL
2495 E. Mountain St. Pasadena, CA. 91104
MEMORIAL SERVICE FOR OUR MARTYRS, MADAGH AT 1:00 P.M.

For reservation and sponsorship opportunities, please call (626) 798-2540 or (626) 390-2810
Visit us at www.hadjinusa.org - Tax deductible donation are accepted
The Compatriotic Union of Hadjin is a non-profit organization. Corporate I.D. # C2662210

# Արժանավայել Շուքով Նշուեցաւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ 75-Ամեակը



*Շաբաթ Հոկտեմբերի 22-ը 2022 յիշատակելի անմոռաց օր մը եղաւ Փասատինայի եւ շրջակայքի հայութեան համար, քանի որ այդ օր պաշտօնական հանդիսութեամբ, տեղւոյն Հայաստանեայց Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծուխը կը նշէր իր հիմնադրութեան 75-ամեակը:*

*Հանդիսութեան վայրն էր եկեղեցւոյ յարակից Կիրակոս սրահը, որ այդ գիշեր տօնական շքեղ յարդարանքներով կը դիմաւորէր իր հիւրերը: Ներկաներուն մէջ կը նշմարուէին օրուան հովանաւոր եւ Թեմիս առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Թեմական խորհուրդի ատենապետ Տիար Տէրիք Ղուկասեան, Լոս Անճելըս գաւառի Հայց. Եկեղեցւոյ հովիւներ, տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, բարերարներ եւ հիւրեր:*

*Օրուան հանդիսավարներ Յակոբ եւ Թամար Թուլթճեաններ բարի գալուստի ջերմ խօսքերով ներկաները ողջունելէ ետք՝ մէկ վայրկեան յոտնկայս լռութիւն պահուեցաւ ի յարգանս Արցախի մեր քաջարի ազատամարտիկներուն:*

*Սեղաններու օրհնութենէն ետք բաժակաճառով մը հանդէս եկաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի փոխ-ատենապետ Վիգէն Քէճիճեան: Ան իր անսահման ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց եկեղեցւոյ պարտքի աւարտին առթիւ, միաժամանակ իր երախտագիտութիւնը բոլոր նուիրատուներուն եւ կամաւոր աշխատողներուն:*

*Ողջոյնի եւ շնորհաւորական ջերմ խօսքերով ելոյթներ ունեցան ԱՄՆ-ի Հայց. Եկեղեցւոյ Թեմական խորհուրդի ատենապետ Տէրիք Ղուկասեան, Հ.Ե. Երիտասարդաց բաժանմունքի տնօրէնուհի Վիքթորիա Ամրան եւ շաբաթօրեայ վարժարաններու տնօրէնուհի Սիլվա Քաւուքճեան:*

*Հակիրճ եւ համապարբակ զեկուցումով մը հանդէս եկաւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ժրաջան հովիւ Արժ. Տ. Սարգիս Աւ. Քհնյ. Փեթոյեան: Ան անդրադարձ կատարելով բացատրեց եկեղեցւոյ շինութեան ընթացքին յառաջացած զանազան դժուարութիւններուն, յատկապէս նիւթական անսպասելի տագնապները, որոնց յաղթահարումը կը տօնենք այսօր:*

*Գործադրուեցաւ երաժշտական կոկիկ յայտագիր մը: Օրուան փայլուն աստղն էր դեռատի եւ շնորհալի օփերային երգչուհի Մարի Մինասեանը, որուն հայերէն եւ օտար լեզուներով ելոյթներու աւարտին՝ ներկաները յոտնկայս ծափահարութիւններով գնահատեցին զինք:*

*Այս առթիւ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Կաթողիկոսի յատուկ կոնդակով, «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանին արժանացաւ Տիկին Մարգարիտ Հուկասեանը, առ ի գնահատութիւն իր եկեղեցանուէր ծառայական կեանքի եւ անխոնջ նուիրմով քսան տարի կիրակնօրեայ վարժարանի տնօրէնութիւնը ձեռնհասօրէն կատարելուն եւ այլ օգտաշատ նախաձեռնութիւններուն համար:*

*Նմանապէս Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայրապետական յատուկ կոնդակով մը Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն շնորհակալութիւն կը յայտնէր Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ժրաջան հովիւ Արժ. Տ. Սարգիս Աւ. Քհնյ. Փեթոյեանին եւ Ծխական Խորհուրդի անդամներուն, որոնք իրենց տքնաջան եւ յարատեւ աշխատանքներուն շնորհիւ եւ բարերարներու աջակցութեամբ կրցան յաջողութեամբ իր աւարտին հասցնել այս դժուարին հանգրուանը:*

*Զոյգ կոնդակներու եւ շքանշանի տըւչութենէն ետք, Գերշ. Յովնան Սրբազանը իր շնորհաւորութիւններն ու անհուն ուրախութիւնը յայտնեց այս աստուածահաճոյ սրբազան գործի լրումին առթիւ: Ան իր շնորհակալութիւններն ու գնահատութիւնը յայտնեց անցեալի եւ ներկայի եկեղեցւոյ բոլոր հովիւներուն, ծխականներուն, յարակից ենթակառոյցներուն եւ իրենց ծառայական կեանքը նուիրաբերողներուն: Սրբազանը յորդորեց նաեւ Աստուծոյ այս տունը միշտ վառ պահել, նշելով որ ասիկա ձեր տունն է միանգամայն»:*

*Սոյն միջոցառումի ամենահետաքրքրական մասը կալուածագրաւի (mortgage) վառման արարողութիւնն էր: Արդարեւ Տէր Սարգիսն ու քանի մը ծխականներ շրջապատուած եկեղեցականներով (Տէր Վազգէն Մովսէսեան, Տէր*

Շար.ը էջ 13

# Իրաքահայերու Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ Վարժարանի 44-րդ Տարեշրջանի Վերամուտը



ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

**ՏԱՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ**

Ողջո՜յն դպրոց մեր լուսատու,
Մեր հարազատ բարեկամ,
Մեր դէմ նորից կանգնել ես դու,
Քո ժպիտով մայրական:

Խօսում ես դու՝ լեզու առած
Այնպէս անուշ կարկաչով,
Թւում է թէ թեւատարած,
Մեր սրտերն ես քեզ կանչում:

Հայրենիքին խօսք են տալիս,
Միշտ սովորել գերազանց,
Ուսման բերդը նուաճելիս,
Լինել զինուոր փառապանծ:

*Շաբաթ, Սեպտեմբեր 15-ին, աշակերտ-աշակերտուհիներու եւ ծնողներու յորդահոս բազմութիւն մը ծաղիկներով, փուչիկներով, կարկանդակներով եւ խմորեղէններով ուրախութեամբ եւ կարօտով եկած էին իրենց դպրոցը, սկսելու համար այս վարժարանի 44-րդ տարեշրջանը:*



*Այդ օր Տէրունական աղօթքով եւ «Ջգործս Ջերաց Մերոց Ուղղիղ Արա, ի Մեզ Տէր» աղօթքով բոլորը միաբերան Աստուծմէ օգնութիւն խնդրեցին, որ մեր ազգանուէր այս գործը ուղիղ եւ արգասաբեր ըլլայ նախորդ տարիներուն նման:*

*Տնօրէնութիւնը, Իրաքահայ Միութեան Ատենապետուհի, դպրոցի գլխաւոր խորհրդատուի խօսքերէն ետք, բոլոր աշակերտները իրենց դասատուներուն հետ ուրախութեամբ եւ խանդավառութեամբ դասերը սկսան:*

*Յիշենք թէ այս դպրոցը հիմնուած է 1979-ին, այդ թուականէն մինչեւ այսօր ունեցած է 3,000-է աւելի փոքրիկներ, որոնք հայերէն լեզու, երգ եւ ասմունք սորված են:*

*Անոնք միայն արձանագրութեան սակ մը կը վճարեն 3աճախելու համար a3s tbroxu, իսկ մեր Թանկագին ուսուցչուհիները 44 տարիներ շարունակ 88էն աւելի noviryalnyr կամաւորաբար հայերէն սորվեցնելով, այս կրթական գործով կը ծառայեն հայ ժողովուրդին:*

***

*Շաբաթ, Հոկտեմբեր 15, 2022 առաւօտեան ժամը 10:00-ին, մեր Ընտանեկան Շաբաթօրեայ Վարժարանէն ներս, տօնական անխառն ուրախութեան մեծ օր մըն էր աշակերտութեան, ուսուցիչներուն եւ պատասխանատուներուն համար:*

*Դպրոցի տարիներու աւանդութեան համաձայն, դպրոցի դասերը կը սկսին Սեպտեմբերի երկրորդ Շաբաթը եւ Հոկտեմբերի երկրորդ Շաբաթը Մշակոյթի օրը կը սկսի մեր պաշտօնական կրթաշրջանը:*

*Այդ օր, պատրաստուած հանդէսով մը կը նշուին եւ կը փառաբանուին հայ գիրերը ստեղծող՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Կաթողիկոսի ու անոնց նիւթապէս զօրավիգ եղող Վրամշապուհ Արքայի համախառն աշխատանքով ծնունդ առած մեր Ոսկեղնիկ հայերէն գիրերը, նմանապէս Հոկտեմբեր 15-ին, մեր վարժարանէն ներս կը նշուի մեր Թանկագին հայերէն լեզուի ուսուցիչներուն օրը:*

*Փոքրիկները գեղեցիկ հագուած, եկած էին երեք շաբաթներու ընթացքին իրենց սորվածով յարգելու համար հայերէն գիրերու ստեղծողները եւ անոնց յաջորդող ու իրենց գործը 1600 տարի շարունակող կրթական մշակները:*

*Ուսուցչուհիները, գլխաւորութեամբ վարժարանի ժրաջան եւ շատ ձեռներէց տնօրէնուհի՝ Տիկ. Անահիտ Խաչատրեանի, սրահը զարդարած էին հայ մշակոյթի օրուան վայել արձանիկներով, զար-*

Շար.ը էջ 15

# Հայկազեան Համալսարանը Կը Կազմակերպէ Հայոց Պատմութեան Դասաւանդման Նոր Մօտեցումներու Աշխատանոց



*Ուրբաթ, 14 Հոկտեմբերին, աւարտին հասաւ Երեւանի «Պարադիգմա» կրթական հիմնադրամին (ՊԿՀ) (www.paradigma.foundation) հետ Հայկազեան համալսարանի կազմակերպած մէկշաբաթեայ աշխատանոցը, որ կը վերաբերէր հայոց պատմութեան դասաւանդման քննական նոր մօտեցումներու:*

*Լիբանանահայ կրթական ցանցի հայոց պատմութեան ուսուցիչներուն նուիրուած այս աշխատանոցը կայացաւ Հայկազեան համալսարանին մէջ, մասնակցութեամբ լիբանանահայ զանազան վարժարաններու շուրջ 20 ուսուցիչ-ուսուցչուհիներու:*

*«Պարադիգմա» կրթական հիմնադրամը Հայաստանի մէջ արդէն չորս տարի է գործող կրթական հաստատութիւն է, որ նպատակ ունի բարեփոխել հայոց պատմութեան դասաւանդումը եւ գբաղիլ յարացուցային փոփոխութիւններու տանող կրթական այլ ծրագրերով:*

*Ծրագիրը կը բաղկանար երկօրեայ տեսական եւ գործնական պարապմունքներէ, քննարկումներէ որոնք կը վերաբերէին մանկավարժական այլեւայլ սկզբունքային եւ կիրառական հարցադրումներու, օրինակ՝ ի՞նչ է պատմութիւնը, ի՞նչպէս դասաւանդել զայն, ի՞նչ կը նշանակէ պատմութիւն դասաւանդել, ի՞նչու դասաւանդել պատմութիւն, ի՞նչ են յատկանիշերը պատմութեան յաջող դասապահին, ինչու կարեւոր է պատմութեան աքթիւ մտածողութիւնը, ինչո՞ւ պատմական դրուագներուն մօտենալ տարբեր տեսանկիւններէ, պէ՞տք է նախընտրութիւն դնել տեսանկիւններու միջեւ, ինչի՞ հիմամբ ընտրել տեսանկիւնները...:*

*Երկօրեայ այս փուլին յաջորդեց դասաւանդման զուտ փորձառական բաժինը, ուր ուսուցիչները դասարաններուն մէջ իրենց աշակերտներուն կիրարկեցին դասաւանդման այս նոր մօտեցումը:*

*Աշխատանոցին վերջին օրը ուսուցիչները մէկտեղուեցան դարձեալ Հայկազեան համալսարան ու քննարկեցին նախորդ երկու օրերուն իրենց փորձարկածին արդիւնքները, արձանագրուած յաջողութիւնները, արծարծեցին թէքնիք, տեսական ու գործնական դժուարութիւնները, եւ պատասխանատուներուն՝ Թալին Սաղտասարեանի եւ Նարեկ Մանուկեանի հետ քննեցին աւելի նպատակամէտ եւ արդիւնաշատ դասաւանդման լուծումներու տարբերակներ:*

*Աշխատանոցի աւարտին մասնակից ուսուցիչներուն տրուեցաւ ՊԿՀ-ի կողմէ պատրաստուած տուփեր «Պատմութիւն # 5» անունով, որոնք կը պարունակեն հայոց պատմութեան ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի հինգ տար բեր թեմաներու աղբիւրային նիւթեր եւ պատմութեան աքթիւ մտածողութեան սկզբունքներու վրայ հիմնուած դասաւանդման մանրամասն ուղեցոյց:*

*Աշխատանոցը ընթացաւ շինիչ, ջերմ եւ դիւրահաղորդ մթնոլորտի մէջ, պարապմունքները եղան թէ՛ խմբակային եւ թէ՛ անհատական ձեւաչափով: Քննարկումները եղան սահուն ու բոլորին մասնակցութեամբ: Սերտացան հաղորդակցութիւնն ու կապը մասնակից ուսուցիչներուն միջեւ, որոնցմէ շատերը արդէն քաջածանօթ էին իրարու:*

*Գործնական, նպատակամէտ, այս աշխատանոցին ուշագրաւ էր նաեւ ուսուցիչներուն նախանձախնդրութիւնը՝ նորահաս սերունդներուն լաւագոյնս մատուցելու եւ փոխանցելու հայոց պատմութիւնը, եւ զայն գիտելիքի կողքին վերածելու քննական մտածողութեան եւ վերլուծութեան նիւթ, զայն առնչելու ներկային եւ իմաստութեամբ օգտուելու անոր դասերէն:*

*Աշխատանոցի աւարտէն ետք, Թալին Սաղտասարեանի եւ Նարեկ Մանուկեանի հետ քննարկուեցան Հայկազեան համալսարանի հետ յառաջիկայ տարուան գործակցութեան ծրագրերը:*

## Արժանավայել Շուքով Նշուեցաւ

Շարունակուած էջ 12-էն

*Յարութիւն Թաշճեան, Տէր Մուշեղ Թաշճեան) մետաղէ ամաններու մէջ դրուած կալուածագրերը վառեցին եւ խկոյն մարեցին արժանանալով ուրախընդոստ ծափահարութիւններու: Ապա ժողովուրդը միաբերան երգեց «Խմենք Հայրենիք» խմբերգը, ղեկավարութեամբ Յակոբ Սրկ. Կակոսեանի:*

*Աւարտին՝ տեղի ունեցաւ երգ ու պար եւ 75-ամեակի կարկանդակի հատում: Պարեղանակներու երաժշտութեան կ'ընկերակցէր DJ Mahig-ը:*

*Ի սրտէ կը շնորհաւորենք այս պատուաբեր գործի կազմակերպիչները:*

*Ամենաջերմ բարեմաղթութիւններով՝*

*Գ. ՄՈԼՈՅԵԱՆ*

# Սիրան Սեզայի Վէպերու Շնորհանդէսը Երեւանի Մէջ («Գիրք ծննդոց», «Խորտակուած Կեանքեր»)



*Տարի մը անց կրկին գտնուեցանք Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի (ԳԱԹ) յարկի տակ երկու նպատակով, հակառակ որ Հայրենիքի մէջ կը տիրէր թշնամիներու կողմէ հերթական նախայարձակման մտալլկիչ մթնոլորտ մը:*

*Յիշեցնենք որ անցեալ տարի Սեպտեմբերին սփիւռքահայ գրող Սիրան Սեզայի գրական հարուստ արխիւը ԳԱԹ-ին յանձնեց Վահագն եւ Անի Քիւփէլեան ամոլը (Սեզայի որդին եւ հարսը)՝ ընկերակցութեամբ Փրոֆ. Սիլվա Գարայեանի եւ բանասէր Նազելի Գոճայեանի, համոզուած ըլլալով որ արխիւի վերջնական հանգրուանը Հայրենիքն է:*

*Այս տարի եւս նոյն կազմով Տէր եւ Տիկ. Քիւփէլեանները իրենց հետ բերած էին ոչ միայն Սեզայի հրատարակած «Երիտասարդ հայուհի»ի պարբերաթերթի ամբողջ հաւաքածոն, արխիւային այլ նիւթեր, ինչպէս նաեւ Սեզայի վաղամեռիկ բանաստեղծ եղբօր՝ Մատթէոս Զարիֆեանի նամակները, որոնք համալրեցին նախապէս ղրկուած արխիւային նիւթերը: Նշենք, որ պարբերաթերթի հաւաքածոն յանձնուեցաւ Ազգային Գրադարանին:*

*Սոյն տարուայ Սեպտեմբեր 15-ին ԳԱԹ-ի սրահին մէջ կայացաւ Սեզայի վերջերս առաջին անգամ հրատարակուած երկու վէպերու շնորհանդէսը՝ տնօրէն Վահագն Սարգսեանի օժանդակութեամբ:*

*Շնորհանդէսի յայտագիրը վարեց Գայիանէ Սամուէլեանը՝ ելոյթներու ընդմէջէն հատուածներ ընթերցելով Սեզայի վէպերէն: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Վ. Սարգսեանը, որ կարեւորեց Սեզա երեւոյթը սփիւռքահայ կեանքին մէջ, քաջալերելով որ մօտիկէն ծանօթանան այս մեծ հայուհիի ստեղծագործութիւններուն:*

*Բանասէր եւ պատմաբան Գէորգ Եազըճեան հանգամանօրէն ներկայացուց Ս. Սեզայի կենսագրականն ու ազգային-հասարակական եւ գրական բեղուն գործունէութիւնը: Գ. Եազըճեան հետեւողա-*

Շար.ը էջ 14



# Հայոց Ցեղասպանութիւնը Վերապրածների Ողբերգական Վիճակի Մասին Պատմող Չեխ Հեղինակի Գիրքն Առաջին Անգամ Թարգմանուել Է Հայերէն




*Չեխ գրող, ճանապարհորդ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Կարել Հանսայի «Արեւելքի Արհաւիրքները» գիրքը, որն առաջին անգամ լոյս է տեսել 1923 թուականին, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին համալրել արգելուած գրականութեան ցանկը, թարգմանուել է հայերէն:*

*Գիրքն անդրադառնում է հայոց պատմութեանը եւ մշակոյթին, Հայոց ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդի կրած տառապանքներին ու բազմահազար որբերի եւ այրիների ողբերգական վիճակին:*

*Գրքի շնորհանդէսը տեղի ունեցաւ հոկտեմբերի 20-ին, Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտում:*

*Գիրքը հայերէն է թարգմանել Օրերէ համաեւրոպական ամսագրի համահիմնադիր, Պրահայի Կառլի համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետի դոկտորանտ Աննա Կարապետեանը:*

*Նրա խօսքով՝ Հանսան մասնագիտութեամբ գրող չի եղել եւ որոշել է ճամփորդել դժբախտ սիրոյ պատճառով: Նա մեկնել է արեւելք՝ դէպի Պոլիս: «Հանսան Զմիւռնիա գնալու ճանապարհին առաջին անգամ նաւի վրայ տեսնում է յոյն փախստականների: Երբ հասնում է Բէյրութ եւ Սիրիա, հանդիպում է Հայոց ցեղասպանութիւնը վերապրողներին: Նա աշխատանքի է անցնում Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կազմակերպութիւնում եւ սկսում է գրանցել հայ որբերին, իսկ որոշ ժամանակ անց նաեւ մասնակցում է որբերի՝ Ուրֆայից, Խարբերդից դէպի Հալեպ, Բէյրութ տեղափոխման աշխատանքներին»,-պատմում է Կարապետեանն ու ընդգծում, որ Հանսայի «Արեւելքի Արհաւիրքները» գրքում հեղինակը վաւերագրել է իր տեսածը:*

*Գրքում Հանսան պատմում է, որ տեսել է հայ կանանց, որոնք այնքան կոտրուած են եղել, որ անգամ չեն կարողացել լաց լինել: Նա նաեւ եղել է հասարակաց տներում, որտեղ բռնի ուժով հայ աղջիկների են տարել: Այդ մասին Կարել Հանսան եւս գրել է:*

*«Սա Հայոց ցեղասպանութեանը վերաբերող չեխերէն գրուած առաջին գիրքն է: Երբ նացիստները գրաւում են Չեխոսլովակիան, «Արեւելքի Արհաւիրքները» գիրքը դուրս է բերւում գրադարաններից ու համալրում արգելուած գրքերի ցանկը: Այն մոռացուած գիրք էր մինչեւ 2006 թուականը, երբ ես եւ ամուսինս՝ Յակոբ Ասատրեանը, վերահրատարակեցինք այն չեխերէն ու հասկացանք, որ գիրքն անհրաժեշտ է հայերէն թարգմանել»,-շեշտում է Աննա Կարապետեանն ու հաւելում, որ սա գիտական թարգմանութիւն է՝ 600-ից աւելի բացատրութիւններով ու մեկնաբանութիւններով:*

*«Արեւելքի Արհաւիրքները» Հանսայի առաջին գիրքն է: Նա անդրադարձել է շատ ծանր թեմայի եւ գրել է այն ոճով, որն այն ժամանակ ընդունուած է եղել: Գրքում շատ են խրթին, երկարաշունչ նախադասութիւնները: «Հիմնականում հանրագիտարանային տուեալներ են: Գրում է Հայաստանի մասին, մեր կրօնի, Մխիթարեան Միաբանութեան, Մաշտոցի մասին: Գրքի նպատակն էր տեղեկացնել, թէ ովքեր են հայերը, որոնց համար Հանսան դրամ էր խնդրում Նա ասում է. «Տուէք, եւ ձեզ համար կ'աղօթեն այս փոքրիկ ձեռքերը»: Գրքում եւ՛ Հանսայի, եւ՛ միսիոներների վկայութիւններն են»,-նշում է թարգմանիչը:*

*Գրքում կան նաեւ լուսանկարներ, սակայն շատ չեն: Կ'արապետեանի խօսքով՝ Հանսայի մահից յետոյ նրա բնակարանը կողոպտել են, եւ նրա արխիւը կորել է:*

*Ըստ Աննա Կարապետեանի՝ գիրքը կը հետաքրքրի ոչ միայն գիտական շրջանակներին, այլեւ սովորական ընթերցողներին: Այն արդէն տեղ է գտել Հայաստանի ազգային, Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի եւ այլ գրադարաններում: Շուտով հնարաւոր կը լինի գտնել գրախանութներում եւ ուսումնական հաստատութիւններում:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

# Թիֆլիսի Մէջ Հայերէն Արձանագրութիւններով Տապանաքարեր Յայտնաբերուած Են



*Վրաստանի մշակոյթի, մարմնամարզութեան եւ երիտասարդութեան նախարարութեան տարածքէն ներս, Թիֆլիսի թիւ 104 հայալեզու դպրոցի բակին յարակից, ընթացող վերականգնողական աշխատանքներու ընթացքին յայտնաբերուած է երկու տապանաքար:*

*Այս մասին ըսուեցաւ Վրաստանի հայ համայնքի պաշտօնական կայքին մէջ հրապարակուած հաղորդագրութեան մէջ:*

*«Նախարար Թէայ Ծուլուկիանի շնորհիւ անմիջապէս դադրած է աշխատանքային գործընթացը, եւ անմիջապէս հրաւիրած են խորհրդակցելու «Վրաստան» թերթի գլխաւոր խմբագիր Վան Պայպութեանին եւ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցւոյ Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դաւթեանին: Տարածք հրաւիրած են Մշակութային ժառանգութեան պահպանութեան գործակալութեան հնագէտները: Հասարակական գործիչ, Թիֆլիսի հայկական մշակութային ժառանգութեան մասնագէտ Լեւոն Ջիտիլեանը, քաջ ծանօթ ըլլալով վանքի պատմութեան եւ պանթէոն թաղուած աճիւններու դասաւորուածութեան, առաջին օրէն մասնակցած ու հետեւած է պեղումներու ամբողջ գործընթացին՝ տրամադրելով արխիւային նիւթեր հնաբաններուն: Հնագէտները աշխատած են նաեւ նախարարութեան ներքին բակի այլ հատուածներուն մէջ եւ յայտնաբերել են հինգ դամբարան: Անոնցմէ երկուքը յայտնաբերուած է մարմարէ տապանաքարերու վրայ պահպանուած արձանագրութիւններու տեսքով»,- ըսուած է հաղորդագրութեան մէջ:*

*Տապանաքարերը կը պատկանին Թիֆլիսի վանքի մայր տաճարի աւագ քահանայ Տէր Յովհաննէս Տէր Պօղոսեանին ու անոր կնոջը՝ Քալի Բեկտաբեկովային: Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանութեան եւ Վիրահայոց թեմի միջնորդութեամբ, Վրաստանի կառավարութիւնը աջակցած է, որ շիրիմները եւ տապանաքարերը տեղափոխուին Թիֆլիսի հայ գրողներու եւ հասարակական գործիչներու Խոջիվանքի պանթէոն: Լեւոն Ջիտիլեանի՝ պեղումները շարունակելու առաջարկը ընդունուած է: Նախարար Թէայ Ծուլուկիանիի կարգադրութեամբ 2023 թուականի Յունուարէն տուեալ հատուածի ողջ տարածքին պիտի իրականացուին պեղումներ: Ապագայ պեղումներու վայրին մէջ թաղուած են Ալեքսանդր եւ Տարիայ Մանթաշեանները, Յովհաննէս, Մարիամ, Կոնստանտին Խատիսեանները, Թիֆլիսի քաղաքագլուխներ Ալեքսանդր Մատինեանցը եւ Պօղոս Իզմայիլովը եւ ուրիշներ: Գործընթացը պիտի շարունակուի:*

# Սիրան Սեզայի Վէպերու Շնորհանդէսը

Շարունակուած էջ 13-էն

*կանօրէն կը զբաղի նաեւ Սեզայի նամակներու ուսումնասիրութեամբ՝ հրատարակելու համար զանոնք:*

*Զոյգ վէպերու խմբագիր Դոկտ. Մինաս Գոճայեանի խօսքը՝ «Սեզան եւ սփիւռքահայ կինը մեր հասարակութեան մէջ» ներկաներուն մատուցուեցաւ Նազելի Գոճայեանի ընթերցումով: Խօսքին մէջ շեշտուած էր Սեզայի վիթխարի ներդրումը առհասարակ կանանց եւ ի մասնաւորի հայ կանանց ընկերային-հասարակական դիրքի կարեւորման գործին մէջ:*

*Շնորհանդէսի հիմնական բանախօսն էր Բանասիրական գիտութիւններու Դոկտոր Մարգարիտա Խաչատրեանը: Ան հիմնական շեշտը դրաւ «Անցեալի մեր չսովորած դասերից եւս մէկի» վրայ: Բանախօսը ցոյց տուաւ ազգային-քաղաքական այն սխալներն ու թերացումները, որոնց մասին ատենին արտայայտուած էր մեծ գրագիտուհին, սխալներ, որոնք կը կրկնուին մեր օրերուն՝ թէ՛ սփիւռքի եւ թէ՛ Հայրենիքի մէջ:*

*Ընտանիքի կողմէ խօսք առաւ որդին՝ գործարար Վահագն Քիւփէլեանը, որ զանազան դրուագներով ներկայացուց մօրը յախուռն ու անզիջող բնաւորութիւնը, եւ իր ընտանիքի երախտիքի խօսքը ուղղեց ԳԱԹ-ի տնօրէնին եւ շնորհանդէսի բոլոր մասնակիցներուն ու ներկաներուն:*

*Շնորհանդէսը իր պատշաճ ու բարձր մակարդակի լրումին հասաւ շնորհաշատ երգիչ Արսէն Համբարեանի Կոմիտասեան երգերու հրաշալի կատարումով:*

*Հանդիսութեան վերջաւորութեան եղաւ գիրքերու մակագրում եւ հիւրասիրութիւն:*

*Ն. Գ.*

# ՀՀ ԿԳՄՍ Նախարարութեան Աջակցութեամբ Արցախի Մէջ Տեղի Ունեցած Է Ազգային Աւանդական Խաղերու Մրցոյթ



Հայաստանի Հանրապետութ- եան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարու թեան աջակցութեամբ Արցախի «Պատմական միջավայրի պահպանութեան պետական ծառայութիւն» կազմակերպութեան եւ «Դիզակ Արտ» մշակութային հասարակական կազմակերպութեան կողմէ Ասկերանի շրջանի Աստղաշէն համայնքին մէջ կազմակերպուած է «Գուպար» խորագրով ազգային աւանդական խաղերու մրցոյթ:

Արդէն երրորդ անգամ կազմակերպուող ազգային աւանդա- կան խաղերու մրցոյթին մասնակցած է Ասկերանի, Մարտունիի, Մարտակերտի, Հատրութի, Քաշաթաղի եւ Շուշիի եւ Շահումեանի շրջանները ներկայա- ցնող եօթը խումբ:

«Դիզակ Արտ» մշակութային հասարակական կազմակերպութեան գործադիր տնօրէն Երազիկ Հայիրեան կարեւորած է ազգային աւանդական խաղերու վերա- կանգնման ու պահպանման միտուած այս ձեւաչափը:

«Ազգային խաղերը հազար- ամեակներու պատմութիւն ունին, իսկ Արցախի մէջ վերջին տարիներուն աշխոյժ ընթացք ստացած է անոնց վերականգնումն ու կիրառումը նմանատիպ միջոցառումներու շրջանակներուն մէջ: Պետական երիտասարդական ծրագրով կազմակերպուող ազգային աւանդական խաղերը մեծ ոգե- ւորութեամբ կ'ընդունուին մասնակիցներու եւ հանրութեան կողմէ: Անոնք ազգայինի պահ- պանման գաղափարին շուրջ երիտասարդները համախմբելուն կը ծառայեն: Մասնակիցները նաեւ հնարաւորութիւն կ'ունենան կապ հաստատելու միմեանց հետ, ստեղծելու միջհամայնքային կապեր եւ հետագայ համագործակցութեան հիմքեր», ըսաւ Հայիրեան:

Արցախի կրթութեան, գի- տութեան, մշակոյթի եւ մարմնա- կրթութեան նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննիս եանի խօսքով ազգային խաղերը կ'արտացոլեն հայկական աւանդական կենցաղն ու կենսակերպը:

«Մասնաւորապէս՝ «Կոխ»-ը ռազմի խաղ է, միւսները՝ տնտեսական այս կամ այն երեւոյթին կ'առնչուին: Այս միջոցառումը հայրենասիրական դաստիարա- կութեան ձեւերէն է՝ յատկապէս ներկայ պամաններուն մէջ, երբ մեր նիւթական եւ ոչ-նիւթական ժառանգութիւնը կը գտնուի մեծ մարտահրաւէրներու առջեւ«,նշեց Լեռնիկ Յովհաննիսեանը՝ կարեւորելով ազգային խաղերու հանրահռչակումը յատկապէս երիտասարդներուն մէջ:

Ընդհանուր առմամբ կազմա- կերպուած է չորս ազգային աւանդական խաղի մրցոյթ, որու արդիւնքով առաջին տեղը գրաւեցուցած է Ասկերանի շրջանի խումբը, երկրորդը՝ Քաշաթաղի, երրորդ տեղը Հատրութի խումբը, որոնք արժանացած են դրամական պարգեւներու:

Միջոցառման ներկայ էր նաեւ Արցախի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Անահիտ Յակոբեանը:


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -------- ---------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: --------------

Tel :------------------------

Email: -------------------------


# Իրաքահայերու Ընտանեկան Միութեան

Շարունակուած էջ 12-էն

դարանքներով եւ իրերով:

Կրթաշրջանի պաշտօնական հանդէսը միայն աշակերտներով եղաւ: Երեք խումբերու բաժնուած դպրոցի աշակերտները, հայ մշա- կոյթի նուիրուած խօսքերով, եր- գերով եւ նուագով հոյակապ յայ- տագիր մը ներկայացուցին պատ- րաստած ուսուցչուհիներու եւ, տնօ- րէնութեան կողմէ:

Երգի ուսուցչուհի Տիկ. Անա- հիտ Իշխանեան միայն երեք շաբթ- ուայ ընթացքին կրցած էր kani mu երգ սորվեցնել, որոնք կատարուե- ցան աշակերտութեան կողմէ մեծ ուրախութեամբ ու եռանդով, իսկ ուսուցչուհիները մէկը միւսէն աւելի լաւ եւ տպաւորիչ, աւելի հաճելի եւ իմաստալի բանաստեղծութիւննե- րով ոգեկոչեցին Ս. Մեսրոպի, Սա- հակ Կաթողիկոսի եւ Վրամշապուհ Արքայի անմահ յիշատակը:

Օրուան պատգամախօսն էր վարժարանի հիմնադիր Պրն. Խա- չիկ Ճանոյեանը: Ան նախ սրտա- գինs շնորհաւորեց մեր նուիրեալ ուսուցչուհիները, որոնք երեք շաբթուայ ընթացքին կրցած էին այսքան շատ բան սորվեցնել մեր փոքրիկներուն, գնահատանքի ջերմ խօսք ուղղեց տնօրէնուհի Տիկ. Անահիտ Խաչատրեանին, այսքան առինքնող եւ գեղեցիկ հանդէս մը կազմակերպելուն համար: Ապա Պրն. Ճանոյեան խօսեցաւ հայ գիրերու ստեղծման մասին, Ոսկեդարուն հրատարակուած գիրքերուն մա- սին, վերջաւորութեան ըսաւ. «Այս գիրերը 1600 տարի թէ իրենք կենդանի մնացին եւ թէ մեզի ալ հայ պահեցին օտարութեան մէջ, անոնք երկինքէն իջած գիրեր էին հայ ժողովուրդը պահելու եւ պահ- պանելու համար»: Ապա Պրն. Ճա- նոյեան կոչ ըրաւ փոքրիկներուն, որ օգտագործեն դպրոցին մէջ եղած իւրաքանչիւր վայրկեանը լաւ սորվելու, խօսելու եւ ապագա- յին ալ իրենց զաւակներուն փո- խանցելու այս լեզուն»:

Հանդէսը վերջ գտաւ մօտաւո- րապէս ժամը 12:00-ին, բոլոր աշա- կերտութիւնը եւ ներկաները հիւ- րասիրուեցան տնօրէնութեան կող- մէ պատրաստուած ճոխ սեղանով մը:

Բարի երթ, կանաչ ճանա- պարհ եւ անփորձանք տարի Իրա- քահայերու Հայ Ընտանեկան Միու- թեան Շաբաթօրեայ Վարժարանին:


## Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.

Bring your family's history back to life!

Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes

Website: norayr.daduryan.com

Email: norayrdaduryan@gmail.com


UNITED STATES POSTAL SERVICE®

**Statement of Ownership, Management, and Circulation (All Periodicals Publications Except Requester Publications)**

| | | |
|---|---|---|
| 1. Publication Title: Massis Weekly | 2. Publication Number: 0 6 6 7 - 3 1 0 | 3. Filing Date: 10-25-2022 |
| 4. Issue Frequency: Weekly, Except two weeks in August | 5. Number of Issues Published Annually | 6. Annual Subscription Price: $50 |
| 7. Complete Mailing Address of Known Office of Publication *(Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®)*: 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104 | | Contact Person; Telephone *(Include area code)*: 626-797-7680 |

8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher *(Not printer)*

1060 N Allen Ave. Pasadena, CA 91104

9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor *(Do not leave blank)*

Publisher *(Name and complete mailing address)*

Vahe Atchabahian 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104

| 15. Extent and Nature of Circulation | | | Average No. Copies Each Issue During Preceding 12 Months | No. Copies of Single Issue Published Nearest to Filing Date |
|---|---|---|---|---|
| a. Total Number of Copies *(Net press run)* | | | 3,500 | 3,500 |
| b. Paid Circulation *(By Mail and Outside the Mail)* | (1) | Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541(Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 110 | 110 |
| | (2) | Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 *(Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)* | 350 | 350 |
| | (3) | Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS® | 2420 | 2420 |
| | (4) | Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®) | 60 | 60 |
| c. Total Paid Distribution *(Sum of 15b (1), (2), (3), and (4))* | | | 2940 | 2940 |
| d. Free or Nominal Rate Distribution *(By Mail and Outside the Mail)* | (1) | Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541 | 40 | 40 |
| | (2) | Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541 | 35 | 35 |
| | (3) | Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail) | | |
| | (4) | Free or Nominal Rate Distribution Outside the Mail *(Carriers or other means)* | 300 | 300 |
| e. Total Free or Nominal Rate Distribution *(Sum of 15d (1), (2), (3) and (4))* | | | 375 | 375 |
| f. Total Distribution *(Sum of 15c and 15e)* ▶ | | | 3315 | 3315 |
| g. Copies not Distributed *(See Instructions to Publishers #4 (page #3))* ▶ | | | 185 | 185 |
| h. Total *(Sum of 15f and g)* ▶ | | | 3500 | 3500 |
| i. Percent Paid *(15c divided by 15f times 100)* ▶ | | | 83% | 83% |

## Հայաստանի Երիտասարդ Ծանրորդները Երեք Ոսկի Մետալ Նուաճած Են Եւրոպայի Առաջնութեան




*Հայ ծանրորդները մէկ օրուան մէջ երկամարտի 3 ոսկէ եւ 1 արծաթէ մետալ նուաճած են Ալպանիայի Տիրես քաղաքին մէջ ընթացող Եւրոպայի Մինչեւ 20 եւ Մ23 տարեկաններու առաջնութեան:*

*Մինչեւ 20 տարեկաններու մրցաշարի աղջիկներու 81 քկ ծանրութեան պայքարին ախոյեանի կոչումը նուաճած է Լիանա Գիւրջեանը՝ երրորդ անգամ արժանանալով այս տիտղոսին:*

*Գիւրջեանը երկամարտի 223 քկ արդիւնքով նուաճած է ախոյեանութիւնը (98+125):*

*Պոկում եւ հրում վարժութիւններուն հայ մարզուհին արժանացած է փոքր ոսկէ մետալներուն:*

*Այս քաշային կարգին պատուոյ հարթակի երկրորդ աստիճանին կանգնած է եւ արծաթէ մետալը նուաճած է Էմմա Պօղոսեանը՝ երկամարտի 215 քկ (94+121) արդիւնքով: Պոկում վարժութեան Պօղոսեանը փոքր պրոնզէ մետալ նուաճած է, իսկ հրում վարժութեան արժանացած է փոքր արծաթէ մետալին:*

*Նոյն տարիքային խումբի տղաներու պայքարին երկամարտի 367 քկ արդիւնքով (171+ 196 ) ոսկէ մետալին արժանացած է 96 քկ քաշային Գարիկ Կարապետեանը՝ գերազանցելով Թուրքիայի ներկայացուցիչ Էմրէ Օզթուրքին, որը դարձած է արծաթէ մետալակիր: Առանձին վարժութիւններուն եւս Կարապետեանը կանգնած է պատուոյ հարթակի առաջին աստիճանին:*

*Մ23 տարեկաններու մրցաշարին ախոյեանի կոչման արժանացած է Արա Աղանեանը՝ երկամարտի 358 քկ արդիւնքով (168+195): Առանձին վարժութիւններուն եւս Աղանեանն արժանացած է փոքր ոսկէ մետալներուն:*

## Բռնցքամարտիկ Անի Յովսէփեանը՝ Եւրոպայի Ախոյեան



*Մոնթենեկրոյի Պուտուա քաղաքին մէջ աւարտին մօտեցող բռնցքամարտի Եւրոպայի առաջնութեան 70 քկ ծարնրութեան եզրափակիչին հայ մարզուհի Անի Յովսէփեանը 4:1 արդիւնքով առաւելութեան հասած է Իռլանտայի ներկայացուցիչ Քրիստինա Տեսմընտի նկատմամբ եւ արժանացած է ախոյեանի տիտղոսին:*

*Հայաստանը նախապէս նաեւ երկու պրոնզէ մետալ նուաճած էր Եւրոպայի առաջնութեան: Պատուոյ հարթակի երրորդ աստիճանին կանգնած էին 54 քկ քաշային Եկատերինա Սիչեւան եւ 63 քկ ծանրութեան Սոնա Յարութիւնեանը:*

## Ըմբիշ Արսէն Յարութիւնեանը՝ Մ23 Տարեկաններու Աշխարհի Ախոյեան



*Հայաստանի ազատ ոճի հաւաքականը աւարտեց ելոյթները Մ23 տարեկաններու աշխարհի առաջնութեան:*

*Սպանիոյ Փոնտեվետրա քաղաքին մէջ ընթացող Մ23 տարեկաններու աշխարհի առաջնութեան ազատ ոճի ըմբիշ, 61 քկ ծանրութեան Արսէն Յարութիւնեանը ոսկի մետալ նուաճած է՝ եզրափակիչին 7:5 արդիւնքով առաւելութեան հասնելով Ղրղզստանի ներկայացուցիչ Թայիրբէկ Ժումաշպեկի նկատմամբ:*

*Արսէն Յարութիւնեանը երկրորդ անգամ կը հռչակուի աշխարհի մինչեւ 23 տարեկաններու ախոյեան:*

## «Նափոլին» Յաղթեց «Ռոմային» Եւ Առաջատարն Է

*Իտալիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին «Ռոման» իր դաշտին վրայ մրցեցաւ «Նափոլիի» հետ եւ պարտութիւն կրեց նուազագոյն արդիւնքով:*

*«Նափոլիին» յաղթանակ բերաւ նիճերիացի յարձակող Վիկթոր Օսիմէնի կոլը:*

*«Նափոլին» 29 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Միլանէն»: «Ռոման» 5-րդն է՝ 22 կէտով:*

## Հենրիխ Մխիթարեանի Կոլին Շնորհիւ «Ինթեր» Յաղթեց «Ֆիորենթինային»



*Միլանի «Ինթերը» կիսապաշտպան, Հայաստանի հաւաքականի նախկին խաղացող Հենրիխ Մխիթարեանի կոլին շնորհիւ 4:3 արդիւնքով յաղթանակի հասած է «Ֆիորենթինայի» նկատմամբ Իտալիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանի խաղին:*

*Միլանեան խումբը յաղթած է աւելացուած վերջին վայրկեանին Մխիթարեանի նշանակած կոլին շնորհիւ:*

*«Ամենագլխաւորը յաղթանակն է, կարեւոր չէ, թէ ով նշանակած է կոլը: Գլխաւորն այն է, որ վաստակեցանք կարեւոր երեք կէտ», ըսած է Մխիթարեան: Ամրան «Ռոմայէն» «Ինթեր» տեղափոխուած Մխիթարեանը առաջին կոլը նշանակեց միլանեան խումբի կազմէն ներս:*

## «Եունիոն Պեռլինը» Պարտուեցաւ, Բայց Դեռ Առաջատարն Է

*Գերմանիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին առաջատար «Եունիոն Պեռլինը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Պոխումի» հետ եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:*

*«Եունիոն Պեռլինը» 23 կէտով կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պայրըն» ետ է 1 կէտով:*

## «Արսենալը» Չյաղթեց «Սաութհեմփթընին»

*Անգլիոյ Փրեմիեր Լիկայի 13-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» հիւրընկալեց «Սաութհեմփթընին» եւ առաջնութեան ընթացքին արձանագրեց առաջին ոչ ոքի արդիւնքը՝ 1:1:*

*11 խաղէն յետոյ «Արսենալ» 28 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն»:*

## «Ռեալ» - «Սեւիլիա»՝ 3:1

*Սպանիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալ» Մատրիտի մէջ մրցեցաւ «Սեւիլիայի» հետ: Իտալացի Կառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:*

*«Ռեալը» 31 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է 1 հանդիպում քիչ կատարած փոխախոյեան «Պարսելոնայէն», որ երկրորդ տեղը կը գտնուի:*




## ՀՄՄ Հասաւ Աւարտականի

*Լոս Անճելըսի լիկայէն ներս հանդէս եկող ՀՄՄ-ի ֆութպոլի առաջին խումբը հասաւ մրցաշարքի աւարտական խաղին:*

*«Փլէյ-Օֆի» վերջին մրցումին ՀՄՄ-ի տղաքը սուր պայքար մղելով 1:0 արդիւնքով առաւելութեան հասան «ACP Phoenix» խումբին նկատմամբ:*

*Աւարտական խաղը պիտի կայանայ այս Կիրակի, Հոկտեմբեր 30-ի առաւօտեան ժամը 10-ին, «GriffithPark»-ի դաշտին վրայ: Հասցէ՝ 3401 Riverside Drive, Los Angeles 90027.*

*ՀՄՄ-ի համակիրները հրաւիրուած են ներկայ գտնուելու խաղին:*